



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

U.S. National Museum  
1282

Vieglip  
337

2004

ԱՅՐԵՐ

ՀՅԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Դ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ՊՈՒԼՂԱՐԻՈՅ

ԵՒ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍԱՄԲԱԳԵՑԱՅ

Աշխատասիրեաց

ՄԿՐՏԻՉ Ս. ԹԻՒԹԻԿՆԱՏԻԿՈՓ

Վիրաբոյժ ի Ծուսանոց



ՄԱՐՍԵԼ

ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱՐԱՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Marseille. -- Imprimerie du Midi, rue Vacon, 50

1888

Ա. Տ.

31848-Կ.2



337-ՀԸԾԿ

(4261  
41)

15020-58 թ)

18334

# ՅԱՐԱՋԱԲԱՆ

## ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Մեր յարդելի բարեկամ Պրն. Մ.  
Թիւթիւնձիէֆֆի որ պուլկարական  
նաւատորմզի գլխաւոր վիրաբոյժն է  
Բուսճուգի մէջ, այս կարեւոր աշխա-  
տութիւն ( ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼԿԱՐԻՈՑ  
ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼԿԱՐ ԱՊՀՍ-  
ՏԱՄԲԱՊԵՏԱՅ) Արմենիաի մէջ հրատա-  
րակելէ յետոյ, օգտակար համարե-  
ցինք նաեւ առանձին տետրակով հը-  
րատարակել այժմ : Պրն. Մ. Թիւթիւն.  
Ճիէֆֆի իւր այս աշխատութեան ա-  
ռանձին տետրակով հրատարակումը  
մեղ արտօնելով, անոր վաճառումէ  
լինելիք շահը յատկացուց ի նպաստ  
Արմենիաի :

Այս տետրակ հրատարակելով,  
մեր նպատակ եղած է շեշտել յեղա-  
փոխական մտքերի մեր աղգի մէջ  
տարածման անհրաժեշտութեանը վը-

րայ և ցոյց տալ թէ Պուլկարներն ինչ  
միջոցներով ձեռք բերած են իրենց  
ազատութիւն :

Խոնարհութեան , խոհեմութեան ,  
Հնաղանդութեան և այլ այդպիսի  
բառերի խեղաթիւրուած նշանակու-  
թեամբն անդադար մեզ քարոզուած  
գաղափարներն վազուց արդէն մեր  
մէջ մարմնացած , մեզ հետ միտ ու  
ուկոր գարձած և վերջապէս մեր ամ-  
բողջ ուղեղի , բոլոր մասածումների  
վրայ աիրապետած են : Հարիւրաւոր  
գժբաղդ տարիների աղդեցութեան  
տակ յղացած , ծնած ու մեծացա  
նախապաշարումներն չէ կարելի ջըն-  
ջել մի քանի օրի մէջ և մեր տարա-  
ծած յեղափոխական միտքեր անտա-  
բակոյս պիտի պատահին գեռ շատ  
հակառակորդների մեր մէջ : 800 տա-  
րիներէ ի վեր Մանկու Թաթարների և  
անոնց խառնուրդ սերունդն եղաղ  
ժողովրդին զար Թիւրք կը կոչեն այժմ  
Եւրոպացիներն , բռնապետական իշ-  
խանութեան տակ կեանք վարած մի

ժողովաւրդ թուլացած կը լինի բնա-  
կանապէս քաղաքական առաքինու-  
թեան զգացումներին մէջ : Աւստի  
զարմանալի չէ տեսնել մեր մէջ նոյն  
իսկ այնպիսի անձեր որոնք հայրե-  
նիքի վերակենդանութեան Ս. Պոր-  
ծին զիրենք նուիրել կը նկրախն , բայց  
միեւնոյն ժամանակ իրենք ալ վերո-  
յիշեալ դարաւոր նախապաշարման  
ազդեցութեան տակ գտնուելով , կը  
խրտչին յեղափոխական մոքերի տա-  
րածումէն :

Այլ սակայն դարձունենք մի ան-  
գամ մեր աչք մեզ վիճակակից թըր-  
քահպատակ մրւս ազգութիւններին  
վրայ և տեսնենք թէ գոնէ մի ազգ  
միայն կրցա՞ծ է առանց յեղափոխու-  
թեան , առանց արիւն թափելու  
ձեռք բերել իւր ազտութիւն :

Սերպիաի , Մօնթէնէկրօի , Բու-  
մանիաի , Յունաստանի և , ինչպէս Պ.  
Մ. Թիւթիւննիէֆփի այս աշխատու-  
թիւն կը յայտնէ , Պուլկարիաի ազ-  
տութեան պատմութիւններն ցոյց

կուտան թէ ազատութիւն չկայ այն  
ժողովրդի որ արիւն թափելու քա.  
ջութիւն չունի : Երկու ազգ միայն  
կայ այսօր Թիւրքի հպատակ որոնք  
անշարժ դրութեան մէջ կեցած կը<sup>1</sup>  
սպասեն և կը յուսան որ ուրիշը գայ  
ազատէ զիրենք . այդ երկու ազգերն  
են Հայերն ու Հրեայներն : Այս  
վերջիններն՝ չնայելով որ իրենց մէջ  
հարուստներ , գիտնականներ և ուրիշ  
տէրութիւնների մէջ բարձր գիրք վա-  
յելող կրօնակիցներ շատ ունին , քա-  
ղաքական առաքինութենէ զուրկ  
գանուելով կը շարունակեն իրենց  
գերութիւն հազարաւոր տարիններէ  
ի վեր , որովհետեւ կը յուսան և կը  
սպասեն որ մի օր Մեսիան կուգայ  
կազատէ զիրենք և կը վերականգնէ  
իրենց անկախութիւն Պաղեստինի մէջ :

Բայց Հայեր ո՞ւմ կը սպասեն . մի-  
թէ անոնց ալ խստացուած մի Մե-  
սիա կայ : Դուցէ անոնք ալ կըխոր-  
հին թէ եւրոպացիններն մի օր տես-  
նելով Հայերի մտաւոր յառաջդիմու-

թիւնն և սիրահարուելով անոնց ձիր-  
քերի և վաճառականական ընդու-  
նակութիւնների , կուգան ազատել  
զանոնք իրենց գերութենէ և անկա-  
խութիւն չնորհել իրենց . . . : Այս-  
պէս հաւատացող կամ հաւատացնող  
հայրենասիրական գործիչներ ալ ու-  
նինք . . . :

Հայ ժողովուրդը իւր ներկայ կա-  
ցութենէ աղատելու համար պէտք է  
ներշնչել անոր մէջ և արծարծել հայ-  
րենասիրական հուրը այն աստիճան  
որ այրէ և ջնջէ անոր սրտի մէջ դա-  
րաւոր ստրկութեան յառաջ բերած  
վախկոտութեան զգացումն և ըն-  
դունակ ընէ անձնազոհութեան վը-  
սեմ զգացման : Այդ նպատակի հաս-  
նելու միջոյներէ մին է նաեւ Պրն. Մ.  
Թիւթիւնձիէֆֆի աշխատասիրած այս  
տետրակի նման գրութիւնների տա-  
րածումը մեր ազգի մէջ : Մեր հայ-  
րենիքի հողը բռնաւորին ձեռքէն ա-  
զատելէ յառաջ պէտք է որ աշխա-  
տինք մեր հայրենակիցների սիրաը

Բ

աղասոել այն ստրկական զգացութներէ  
որոց ենթարկուած են :

Չխաբուինք . ինչ որ զէնքով խը-  
լած են մեր ձեռքէ , զէնքով միայն  
պիտի կրնանք յետ առնել . մեռնող  
Հայեր պէտք է լինին որ կենդանա-  
ցած և վերականգնած Հայաստան  
լինի :

Բայց ե՞րբ է յեղափոխութիւն  
հանելու ժամն ու ժամանակը . այդ  
չենք կարող մենք այժմէն ասել այս  
տետրակի մէջ և մինչեւ անդամ մենք  
չենք ուզե՞ր գահավէժ կերպով փու-  
թացունել գէպքելն , այլ ինչ որ կու-  
զենք ընել , ինչ որ պէտք է ընել և  
ինչ որ կարելի է ընել , այս է . պատ-  
րաստել հայ ազգը յեղափոխութեան  
համար յարմար առիթներէն և գէպ-  
քերէն օգուտ քաղելու :

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

1888 օգոստ 4/13

Մարտէյլ

## ՅԱՌԱԶԱԲԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ՀԱՐՍՏԱՀՈՐԵԱՆ  
ՀԱՅՈՑ ՎՐԱՅ

« Աղատութիւն և կամ Մահ » .  
ահաւասիկ այդ երկու վակեմ բառերն  
են նիւթ եղած ներկայ գրութեանո .  
Պուլզարք այդ երկու բառերով ոգե-  
ւորուած , գարերով Տաճկաց գէյ  
պատերազմելով , կը նահատակուէին  
վասն Աղատութեան հայրենեաց :  
Այսօր Հայաստանի մէջ անդադար և  
անխղճօրէն ի գործ կը գրուին Հայոց  
վիայ հարստահարսութիւնք , մարդաս-  
պանութիւնք , բռնաբարումն պատ-  
ւոյ , բանտ , աքսորանք , ելն . ելն .  
բայց անուբանալի ծամարտութիւն մը  
կը լինի երբ ըսենք թէ Պուլզարիոյ  
մէջ կը կնապատիկը կը գործուէր ան-

խիղճ Զէրքէզաց և բարբարսս Տաճ-  
կաց կողմանէ . գրէթէ տմեն օր մե-  
ծամեծ քաղաքաց մէջ, ծեր և երի-  
տառարդ, հարուստ և ազքատ, մե-  
ծագոյն մասը ուսեալ, հաղարաւոր  
Պուլզարներ մահուան և կամ մշտնչե-  
նուոր բանտարկութեան կը դատա-  
պարտուէին : Ընթերցնզ, արդեօք  
ի՞նչ էր այդ անմեղ Պուլզարներու  
յանցանքը . իրենց յանցանք վերա-  
դրաւած էր ապստամբութիւն, յեզա-  
փոխութիւն և վերջապէս մէկ խօս-  
քով հայրենասիրութիւնն : Եւ յիրաւի  
ալ այդ գործը մեծ ճարտարութեամբ  
և արու եսառով առաջ կը տանէին Պուլ-  
զարք, ինչ որ քիչ մը վերջը խօս-  
քանչիւր Պուլզար ապստամբապետաց  
կենսագրութեան մէջ մի առ մի պիտի  
կարգաց ընթերցողը և պիտի հիանայ  
նոցա քաջագործութեանցը վրայ :  
Մեր նպատակն այն պիտի լինի որ  
Հայտառանի քաջեր օրինակ առնելով

Պուլզարներէն, գոնէ կարենան աղա-  
տութեան ասպարէզովն ընթանալ :  
Ով Հայտառանցի եղբայրներ, ալ ես  
գլուխ մի խօնարհեցնէք այն հրէշ  
Քուրդերու որոնք ձեր արիւնը կը խմեն  
անգիտաբար, ձեր ազօթատեղիներն  
կը սրբապզծեն, ձեր պատիւը կը բրո-  
նաբարեն և անիրաւութեամբ զձեզ  
Հարստահարելով բանտարկել եւս կու-  
տան . այս, ալ եւս պէտք չէ որ վատ  
Քուրդին անխմայ տապարը ձեր գրլ-  
խին վրայ շողայ, ալ եւս պէտք չէ  
որ Հայը խօնարհի Քուրդին, վերջա-  
պէս պէտք չէ որ այլ եւս Հայը գերի  
լինի այնպիսի ազգի մը, որոնք խայ-  
տառակ, վայրենի և բարբարսս հրա-  
տարակուած են բոլոր աշխարհի առ-  
ջեւ, որոնք ոչ խիղճ ունին և ոչ  
գութ : Այժմ բնականապէս պիտի  
հարցնէ հարստահարեալ Հայը թէ  
ինչ պէտք է ընէ որ կարենայ ազատ  
լինել Քուրդին հարուածէն . ահա

քեղի մէկ հատիկ խորհուրդ . կար-  
դա Պուլզար ապստամբապետաց կեն-  
սագրութիւնները . տես թէ ինչ ը-  
րած են նոքա Տաճկաց , նոյնը ըրէ և  
դու Քուրդին . ինչպէս վարուեր են  
Պուլզարք անոնց հետ , ճիշդ այնպէս  
վարուէ դու ալ Քուրդին հետ . դոր-  
ծէ միութեամբ և հայրենասիրու-  
թեամբ : Պէտք է կազմուին դադանի  
և զօրաւոր ընկերութիւններ Հայաս-  
տանի մեծամեծ քաղաքաց մէջ , որոց  
նպատակը պէտք է լինի մի միայն մեր  
սիրելի հայրենեաց փրկութեանը ծա-  
ռայել : Պուլզարք Թուրքք բարեկամ-  
ներ որսալով , վարպետութեամբ նո-  
ցա զէնքերը ծախու կառնէին օր մը  
իրենց գէմ դարձնելու համար . Հայր-  
դիւրաւ կրնայ բարեկամանալ ճիւադ  
Քուրդին հետ և ոչ թէ նորա զէնքը ,  
այլ եթէ ուղէ , Քուրդին հոգին ան-  
գամ կարող է առնուլ : Պէտք է Հայ  
ասպատակներ խումբ խումբ ամեն

տեղ երեւան ելնեն : Պուլզարք ունէին  
գաղտնի դործակատարներ որոնք  
գաղտնապէս քաղքէ քաղաք և գիւ-  
ղէ գիւղ ըլջելով անձնուրաց երիտա-  
սարդներ կը գլէին իրենց հաւանու-  
թեամբ . նոքա այս ինչ և կամ այն  
ինչ Վոյզօտաններու խումբին մէջ կըն-  
դունուէին և երգմամբ կուխտէին այս  
սրբազն պաշտօն վարելու : Ես շատ  
Պուլզար ապստամբներ տեսած եմ ,  
որոնք երբ Տաճիկ կառավարութիւնը  
ձերբակալելով կը հարցաքննէր խոս-  
տանոլով իրենց կեանքը աղատել , այդ  
քոչ հայրենասիրներ ամենայն ահ-  
տարբերութեամբ կուրանային իրենց  
բոլոր գիտցածը և որ եւ է գաղտնիք  
չխոսութվաննելով և նախատելով Տաճիկ  
կառավարութիւնը , կարժանանային  
նահատակալութեան լուսեզէն պատկին ,  
քանզի գիտէին այդ անձինք որ եթէ  
մատնեն իրենց աղջը , չպիտի աղա-  
տին , որ կողմ որ գառնան , միշտ ի-

բենց բաժինն է մահ . Պուլզարք լու  
համոզուած էին այս գաղտափարին :  
Ասկէ տառը տարի առաջ , Պուլզարք  
իբրեւ կերակուր ստեղծուած էր գա-  
ղանաբարոյ Տաճկաց , ինչպէս որ այ-  
սօր Հայը այն վատահագի Քուրդին .  
ասկէ տառը տարի առաջ , կըսեմ ,  
Պուլզարք հօգւով մարմնով գերի ե-  
զած էր Թուրքին , ինչպէս այսօր մեր  
Եղբայրները . խեղճ Հայեր , ինչ սար-  
սափելի ցաւեր կը կրեն լոիկ մնջիկ  
որ լսող մը անգամ չկայ : Այս , պէտք  
է , կը կրինեմ , որ մեր քաջ Հայերն  
ալ սուր ի ձեռին գիմագրեն իլենց  
թշնամեաց . եթէ այս ժամուս տասն  
Հայ սպաննուի , հետեւեալ ժաման  
անհրաժեշտ պէտք է որ քոան Քուրդ  
սպաննուի . եթէ այսօր Հայու եկե-  
զեցի և կամ վարժարան մը այրեն  
Քուրդեր , հետեւեալ օրը պէտք է որ  
ամբողջ Քուրդ գիւղ մը մօխիր դառ-  
նայ . վերջապէս մէկի փոխարէն երկու

երեք չարիք հասցնել պէտք է նոցա ,  
ոչ թէ կուրօրէն սպաննուիլ , կոզոպ-  
տուիլ և խաղալիկ լինիլ վատազգի  
մարդոց . պէտք է այսպէս վարուիմք ,  
եթէ ոչ մինչեւ ցվերջ աշխարհի Հայը  
իբրեւ գերի սնարդանաց և նախա-  
տանաց առարկայ մը պիտի լինի միշտ  
ինչպէս որ է այսօր : Մատքերենք ան-  
գամ մը թէ մեր նախահարց պաշտամ  
Նրոց վանքերը այսօր այդ վատ Քուր-  
դին կենդանեաց տիսու մ'եղած են  
և կամ ապաստանարան աւաղակ և  
մարդասպան Քրդաց . մինչեւ իսկ կոյս  
Հայու հեաց պատիւր այդ վանքերու  
մէջ կը բռնաբարսւի . ահա Հայը ենիք  
և Աղդութիւն , Կրօնք և Եկեղեցի  
սոնակոխ , կենաց և ընչից անապա-  
հով վիճակ , բանտ , տանջանք , մինչեւ  
իսկ մահ . սոցա ամենքը խեղճ տա-  
ռապեալ Հայոց գլխուն վրայ կը ծան-  
րանան հետղինեաէ : Արդ ժամանակի է  
որ արթնամաք մեր թմրութենէն , աչ-

քերնիս շվենք և յիշենք թէ մենք  
ալ մի հին տղգ ենք տշխարհի վրայ  
և այսօր սահմանադրական վարչութիւն  
ունեցող մի տղգ պէտք է որ  
մեր Ասքանազեան քաջերուն գերեզ-  
մանները թշնամեաց արեամբը կար-  
մրին . կարծեմ թէ Հայոց որտերուն  
մէջ զեռ չէ մարտօն բոլորովին հայ-  
րենասիրութեան կայծը : Ահա կը բա-  
նամ ձեր առջեւ ապադային ազա-  
տութեան վարագոլը . միանանք սի-  
րով և ճշմարտութեամբ , սիրենք տա-  
ռապեալ հայրենիքնիս , ատենք մեր  
թշնամինները , զարնենք մեզ զարնող-  
ներուն և մեր ու մեր հայրենեաց  
պատիւը պաշտպանելով տանք մեր  
վերջին շունչ , գոչելով « Ազատու-  
թիւն և կամ Մահ . կեցցէ Հայա-  
տան » :

Մնամ Ազգիս անձնանուէր և տ-  
ղատութեանն ցանկացող

ՄԿՐՏԻՉ Ա. ԹԻՒԹԻՒՆՃԻՖԹ

Դոյ. 23/10 գեկտ . 1887  
Պուստուգ

## ՊՈՒԻ ԼՂԱՐՔ

### Յ Յ Յ Յ Ա Ր Բ

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Պ Ե Տ Ա Խ Թ Ե Ա Ն Տ Ա Կ

---

Պ ուլղարք մինչեւ 14րդ դարուն  
վերջերը սւնէին ինքնիշխան  
թագաւորներ որոնք կիշխէին Պուլ-  
ղարիոյ , Արեւելեան Բումէլիի , մին-  
չեւ Աղրիանուպօլիս և Մակեդոնիոյ  
մէկ փոքրիկ մասին ալ . յետոյ բոլո-  
րովին վերջացաւ Պուլղարաց թագա-  
ւորութիւնը Սուլթան Պէյազիտ Բի  
օրով 1481 թաւականին , Պուլղարիոյ  
իվան Շիշման թագաւորին ժամանել  
Պուլղարք երկու տարի շարունակ  
պատերազմեցան Տաճկաց գէմ . Արագ  
Եսուսուֆ փաշա որ Օսմանեան զօրաց  
ընդհանուր զօրտվարն էր , մեծամեծ  
կոտորածներ տոււաւ Պուլղարաց . այս-

պէս Պուլզարաց երկիրը գրաւելէ յետոյ , Սուլթան Պէյալիտի բարձրագոյն հրավարտակաւն Զինան փաշան ընդհանուր Պուլզարիսյ փոխարքայ կարգեց : Քսան տարի շարունակ այսպէս կը կառավարուէր . յետոյ կուսակալներ զրկուեցան որոնք մեծամեծ քաղաքաց և զիւզօրէից կիշխէին մինչեւ 1877 թուականն . ասկից կիմանանք թէ Պուլզարք Օսմանեան պետութեան ներքեւ 396 տարի կեցած են : Վերջապէս 1877ին Ռուսիոյ Ալեքսանդր Բկայսեր շնորհիւ ստացան Իշխանապետութիւն (Principauté) : Սոյն 396 տարուան շրջանի մէջ Պուլզարք ալ բաւական կսարածներ տուին Տաճկաց : 1650 թուականէն սկսան ասպատակ խումբեր կազմուիլ Ապստամբատպետներու (Վ.օյլոտա) հրամանատարութեամբ որոնց կենսագրութիւնները քիչ մը վերջը պիտի կարդայ աղնիւ ընթերցողը : Այդ վօյլոտանները հա-

զարաւոր անգամներ կանոնաւոր թուրք զօրաց գէմ հայրենեաց ազատութեան համար պատերազմած են քաջաբար . վերջապէս Ռուսիա տեսնելով նոցտ կրած անտանելի հարստահարութիւնները և ցաւերը , անմիջապէս քրիստոնէից ազատութեան անունով ելաւ կանգնեցաւ , 300,000 զօրք Գանուրի եղերքը լեցուց և քիչ ժամանակի մէջ թուրքերուն յազդելով յաջողեցաւ գրաւել ամբողջ Պուլզարիան և այսպէս կենդանացուց մեռեալ համարուած ազգ մը :

1.

Վ.Ե.Ք.0 Վ.03Վ.08Ս. (\*)

Ծնու 1762 թուականին Պուլզարիոյ Թրամբա գիւղաքաղաքի մէջ : Վ.Ե.Ք.0 Հազիւ 20 տարեկան էր , երբ զգաց հայրենասիրութեան կայծերու

(\*) Ըստ ուսանց Հայտուտ Վ.Է.Ք.0 :

բորբոքութիւնը սրտին մէջ և սկսաւ առաջ  
անդ շրջագայելով համոզել երիտա-  
սարդները : Վերջապէս յաջողեցու  
հարփութիւնի չափ ասպատակներու խումբ  
մը կազմել որ առաջին անգամ վէլ-  
քօի հրամանատարութեամբ սկսաւ  
ապստամբիլ Տաճկաց գէմ 1784ին ,  
Սուլթան Մէլիմ Գի օրով : Վէլքօ ե-  
րեք տարի շարունակ Սթարտ Բլանի-  
նաի (Էսկի Պալքան) մէջ դիմադրած է  
Տաճկաց : Յիրաւի մայիս ամսէն ըս-  
կուեալ մինչեւ աշնան վերջերը ի՞նչ  
գեղեցիկ տեսարաններ կը ներկայա-  
ցնէ այդ Սթարտ Բլանինան . կարծես  
Աստուած ստեղծած է զանի մի միայն  
հայրենասիրաց ապստամբարան լինե-  
լու համար . վերջապէս Սթարտ Բլա-  
նինաի մէջ թափառական և փախըս-  
տական շրջով ասպատակ խումբերն  
միայն երկու բանէ զուրկ էին , մին՝  
արեւուն վարդակարմիր ճառագայթ-  
ները և միւսն՝ դիշերուան երկնից

կամարը փայլվելող ասաղերը . ասոնք  
տեսնելէ զրկեալ էին , զի ընթերցալը  
թող երեւակայէ անգամ մը թէ երբ  
այն ահագին 10էն մինչեւ 13 մէթր  
բարձրութիւն ունեցող և աճումն ա-  
րագապէս շարունակող ծառերու բաղ-  
մատերեւ ճիւղերն իրարու կաշկանդ-  
եալ լինին , ի՞նչպէս կարելի է որ  
տեսնէ մարդ երկնից կամարը . Ամեն  
կողմ քաղցրահամ և առատ ջուր կը  
բղիսէ այդտեղ , կերպ կերպ թըս-  
չունք քաղցրածոյն կերպեն , և այն :  
Վէլքօի խումբը գոհ և ուրախ էին  
իրենց վիճակէն , քանզի նոքո ազատ  
կապրէին , ազատ և քաղցրիկ հողմ  
կը չնչէին , ինչ որ կուղէին անել՝ կը  
յաջողէին . կը ճաշէին զուարթ , կեր-  
պէին ազատ երգեր , կը պարէին ի-  
րենց հաւատարիմ սիրու հիներու հետ  
և գարձեալ ողջոյն կուտային նոր հո-  
րիզոններու և նոր օրերու . մէկ խօս-  
քով , ով որ կը գտնուի Սթարտ Բլա-

Նինափ մէջ , աղաս և երջանիկ է այն  
անձը :

1786 գեկու ամսոյ սկիզբները երբ  
կիմանայ Վէլքօ թէ մի քանի վաշտ  
Օսմանեան զօրքեր , Տէլիպաշներու  
հետ պիտի յարձակին իւր վրայ , ան-  
միջապէս իւր խումբին հետ միատեղ  
խոյս կուտայ ի Սերպիս և անդ մի-  
անալով Գարս Կէօրկի անուն Սերպ  
ապստամբառեափի հետ , կը խորհր-  
դակցին Պէլկրատի մէջ յեղափոխու-  
թիւն յարուցանել որ յաջողին թուր-  
քերը վանել անկից : Այսպէս 1787  
փետրվար ամսոյ մէջ , գիշեր մը բեր-  
գի պահապան զօբաց վրայ յարձա-  
կելով երեք հարիւրէ աւելի Օսման-  
եան զօրքերը կը ջարդեն և կը տիրեն  
այն աճագին բերգին . յեղափոխու-  
թիւնը կը շարունակեն մի քանի օր .  
յետոյ կը տեսնէ Վէլքօ որ անկարելի  
պիտի լինի աճբողջ քաղաքին տիրել ,  
գիշեր ատեն խոյս կուտայ , Դանուր և

Սավս գետերու վրայէ անցնելով , ա-  
ռանց թուրք.ք զօրքերէն իմացուելու ,  
և անդ մօտակայ անտառներու մէջ  
կապատանի : Զորս ամիս յետոյ ,  
Վէլքօ իւր տըբանեակներով նորէն  
կանցնի իւր հայրենիքը ի Պուլպարիա  
և անդ կապատանի թրմովա քաղա-  
քի մօտ աճագին լերան մը գագաթը  
Պուլպարաց Վլատիսլավ արքայի ժա-  
մանակ կառուցեալ Սվէթի Թրօիցա  
(Ս. Երրորդութիւն ) անուն վանքին  
մէջ : Վէլքօ անդ նորէն կը յաջողի  
մարդիկ հաւաքել և 2000 հոգւով կը  
պատերազմի Քարտ Պէյզի և Տէլի  
Քառակը անուն հրամանատարներու  
դէմ . շարունակ 20 օր կը տեւէ այս  
պատերազմը , յաղթութիւնը Պուլպա-  
րաց կողմը մնալով . բայց տւա՛զ որ  
Վէլքօ ծանրապէս վիրաւորուելով կը  
մեռնի 1787 յունիս 22ին , իրեն յա-  
ջորդ թողլով իւր եղբայրը Տռակօյ :

2.

ՏՈՒԱԿՈՅ Վ.03Վ.0ՏԱՅ.


Ենաւ 1766ին, դարձեալ Թբավ-  
նայի մէջ: Եզրօքը մահուանէն յետոյ,  
երդուընցաւ իւր բոլոր կենացը մէջ  
միշտ Տաճկաց գէմ պատերազմիլ և  
իւր եզրօք վրէժը տռնուլ: Քիչ ժա-  
մանակի մէջ, Տռախոյ իւր աղդ ին սի-  
րելի հանդիսանալով յաջողեցաւ հա-  
զարաւոր երիտասարդաց գլուխը անց-  
նիլ: Նախ Գարա Ֆէյզի և Տէլի Քա-  
տիր բռնաւորները սպաննելով վրէ-  
ժը լուծեց: Օր մը Սըլէթի Նիքօլս  
(Ա. Նիկոլս) Պալքանի մէջ տէզի ու-  
նեցած պատերազմն մէջ վիրաւոր-  
ուելով մեռաւ, երկու տարի Օռ-  
մանցիներու գէմ մաքառելով:

3.

ԴՕԽՁ Վ.03Վ.0ՏԱՅ. (\*)

Դօնչօ Տռականօֆ Ճնաւ Պալզա-  
րիոյ Քլիսուրա գիւղաքաղաքի մէջ  
1770 թռւականին: Սա Տռական ա-  
նունով աղքատ հովուի մը զտւակին էր:  
Երբ 10 տարեկան եղաւ Դօնչօ, իւր  
ծերունի հօր հետ կելնէր Քլիսուրայի  
ոչխարները արածելու . մէկ տարուան  
շընանի մէջ լաւ սորվեցաւ այս ար-  
հեստը և ոկտաւ մինակ արածել կեն-  
դանիները: Տռական շատ գահ էր իւր  
վիճակին և անդադար կօրչնէր իւր  
զաւակը, զինքը հանդիսու ընելուն  
համոր: Դօնչօ մինչեւ 21 տարեկան  
հաստակը շարունակեց իւր այս սպաշ-  
տոնը. Նա միշտ Սթարա Բլանինաի

(\*) Հռչակաւոր Պուլպոր գրագէտ  
Լիւպին Քառամիլոփի Հատընտիրներէն  
քաղուած:



մէջ կարածէր իւր կենդանիներն. կար-  
ծես թէ գիտէր որ օր մը աշխարհի  
հրաժեշտ տալսվ, այդ թշնինախ մէջ  
տարիներով Տաճկաց դէմ մաքառելէ  
յետոյ իւր կետնքը անդ պիտի վեր-  
ջացնէր : Ետո անդ ամներ ականատես  
եղած էր նա Տէլիպաշիներու և Քրո-  
ճալիներու Պուլզարաց դէմ գործած  
բարբառառութեանց : Ա՛հ, Աստուած  
իմ, կըսէր Թօնչօ . տրդեօք ե՞րբ պի-  
տի գոյ այն օրը որ այս անօրէն  
Թուրքերն ալ սկսին ողբաշ իրենց  
զաւակօքը մէկտեղ ինչպէս որ Պուլ-  
զարները կողբան այսօր . ա՛հ, Թոնւրք,  
Թոնւրք, ինչ չարագործութիւն որ կը-  
նէք մեզ այսօր, անշուշտ օր մ'ալ  
նոյնը պիտի տեսնէք Պուլզարներէն.  
ո՛ւ Աստուած, արդեօք ե՞րբ պիտի  
գոյ այն օրը : Այս ըսելով իւր տչ-  
քերը երկինք բարձրացուց և արտա-  
ռուքի ջերմ կաթիլներ իւր դէմքի  
վրայ տեսնուեցան :

Թօնչօ ունէր գեղեցիկ քոյր մը  
տասն և հինգ տարեկան, Յօնա ան-  
ուամբ, որ Դէտէլին Վօրվօտայի նը-  
շանածն էր : Այն թուականին Դէտէ-  
լինը Վէլքօ Աւագակապետին հետ  
Սերպիացւոց Հողին վրայ Տաճկաց դէմ  
կը պատերազմէր : Երեկոյ մը Քիսու-  
բա (Թօնչօի գիւղը) եկաւ մի Թուրքը  
գատական պաշտօնեայ . գիւղագետը  
առաւ այդ Թիւրքը և գիշերելու  
համար Թօնչօի տաւնը տարաւ : Յար-  
գանօք հիւրընկալեցին ծերունի պաշ-  
տօնեայն . երբ թողուցին զնա որ հան-  
գըստանայ, Յօնան իւր քով կանչեց  
և սկսաւ համոզէլ, թրքացնելով ի-  
րեն կին տանելու համար . բայց Յօ-  
նան կը ծաղրէր զնա և կըսէր . ես  
առիւծի պէս մի նշանած ունիմ, ի՞նչ  
հարկ կայ . որ թրքանամ և Թուրքի  
կին լինիմ : Վերջապէս իմացաւ Թուրքը  
պաշտօնեայն թէ Յօնային նշանածը  
Դէտէլինն էր որ մահմետականաց դէմ

կը պատերազմէք . սկսաւ յանդիմանել  
Յօնայի մայրը և ըստաւ որ հետեւեալ  
օր փաշային իմաց պիտի տայ եթէ  
Յօնան իրեն կնութեան չտրուի : Մայ-  
րը սկսաւ աղաչել որ Դէտէլինի վրայ  
բան մը չխօսի փաշային : Խեղճ Յօնան  
հետեւեալ առաւօտուն ճանրայ ելաւ  
անօրէն Թուրքին հետ , բռնութեամբ  
մահմետական կրօնքն ընդունելու հա-  
մար :

Տարի մը յետոյ Դէտէլին վերա-  
դարձաւ Սրբիաէն և իմացաւ Յօնաի  
բռնի առեւեանգութիւնը , խոկ Յօնա ամ-  
բողջ տարի մը հաստատ մնացած էր  
իւր կրօնքի վրայ : Թուրք պաշտօն-  
եայն , վատ արարածը , թէեւ շատ  
կը տանջէր պուրդարուհին որ թրքա-  
նալով իրեն կինը լինի , բայց նո եր-  
բէք չէր լսէր Թուրքին : Դէտէլին և  
Դօնչօ իրենց հալլենի տունը թողլով  
հեռացան , Օր մը երբ Սթարա Բլա-  
նինաի մէջ Թուրք կողասյին , յանկարծ

անդէն մի չըթաք (1) ներկայացաւ  
Դէտէլինի և սկսաւ պատմել իւր նը-  
շանածի վրայ ճշմարիտ տեղեկութիւն-  
ներ . այդ անձը կըսէր թէ ախւ և  
գիշեր կը տանջուի թշուառ աղջիկը .  
Թուրք պաշտօնեայն իրեն հնազան-  
գեցնելու համար օրերով անօթի կը  
թողու զայն որ ստկայն դարձեալ  
չհնազանգիր Թուրքի կամքին : Երբ  
Դօնչօ կը լսէր չըթաքի խօսքէրը ,  
կը սկսէր դառնագին լու : Վերջապէս  
երկու առաջակապետք գիշեր մը ճան-  
բայ ելան Պէտքօվիցա երթալու .  
Սթարա Բլանինաի ամենէն վտանգա-  
ւոր ճանբաներէն գիշերային խաւա-  
րին մէջէն ուղղակի իջան Պէտքօվիցա  
ուր կը գտնուէր Յօնա . անդ չաղաց-  
քի մը մօտ փոքրիկ անտառի մը մէջ  
քնացան . երբ առաւօտեան արշա-  
լոյսը կը ծագէր , մի պուլզար գինե-

(1) «Զըթաք» կըսուի պուլզարիացի  
Թրքաց :

տան մը մէջ մտան խորհրդակցելու :  
Այն թուրք պաշտօնեայն Պէտքօվիշ-  
ցաի դատաւորն (խոտին) էր . որոշե-  
ցին որ դատաւորին ծառան (որ մի  
տեղացի Պուլզար էր ) կաշառելով,  
նորու ձեռնառութեամբ Յօնան փախ-  
ցընեն և թուրքն ու սպաննեն : Նոյն  
օրը յաջողեցան Պօրիսը (դատաւորի  
ծառան) գտնել . մէկ երկու ժամի  
չափ խօսակցեցան նորա հետ , ամեն  
ինչ կարդագրեցին . Յօնա պատրաստ  
կ'սպասէր իւր նշանածին : Կէս գիշերը  
մօտ էր . Յօնաի դաւկած սենեկին  
պատուհանէն Յ մէթր բարձրութեամբ  
չուտնէ շինուած սանդուխ մը կախեց  
Պօրիս . այդ պատուհանը փողոց կը  
նայէր . Դօնչու և Պէտէլին քաջ նա-  
ւաստիներու նման վեր ելոն և Յօ-  
նաի պատկելու սենետկը մտան ուր  
պատրաստ կ'սպասէր նա : Միեւնոյն  
սենեկի մէջ ուրիշ մի երիտասարդ աղ-  
ջիկ կը քնանար . այս արտրածն ու

Պուլզար աղջէ էր որ Յօնաի նման  
բռնութեամբ տռեւանգած էին իւր  
աղջատ ծնողացը գլուխն : Պէտէլին  
համբուրեց իւր նշանածը և յանկարծ  
ոկտաւ հեծկլտալ . նոյն միջոցին Դօնչո  
տեսաւ միւս աղջիկը որ մետաքսեայ  
անկողնոյ մը վրայ տարածուած , ձեռ-  
քերը խաչաձեւ կուրծքին դրած ,  
երկայն և խարտիչագոյն մազերը  
տակնուվրայ , հանդարտ կը քնանար :  
Դօնչո մօտեցաւ նորու , բռնեց նորա  
բազուկը և հաստ ձայնիւ արտասան-  
նեց . Մթավայ , տա խօտիմ (ելլի եր-  
թանք) : Աղջիկը ելաւ կանգնեցաւ ,  
մէկ մը գէպի աջ կողմը դարձուց իւր  
աչքերը , յետոյ ձախ կողմը . տեսաւ  
երկու զինեալ անծանօթ մարդիկ :  
Նախ ետ քաշուելով գողաց , յետոյ  
այնպէս ուժգին պօռաց որ տանը մէջ  
եղող անձինք ամենքն ու սացսափա-  
հար ոտքի ելան . ծերունի թուրքը  
իւր անկողնոյն քող կախուած զէն-

քերէն երկու Բրիգիրէնի ատրճանակ  
ձեռացը մէջ առնելով եկաւ դրանք  
մէջ կանգնեցաւ . նոյն միջոցին Դէտէ-  
լին իւր երկայն գանակով երկու հար-  
ռուած տուաւ Թուրքին , նա ալ ձե-  
ռացը մէջ ունեցած ատրճանակներէ  
մին արձակեց Դէտէլինի վրայ ու գե-  
տին գլորեցաւ . Դէտէլին ազատ մը-  
նալու համար մէկ կողմ քաշուեցաւ .  
իսկ Յօնան իւր նշանածին ետեւը  
կանգնած լինելով , ատրճանակին բեր-  
նէն ելած գնատակը ուզզակի Յօնաի  
սիրով մտաւ և միւս կողմէն ելնելով  
ինկաւ տախտակամածին վրայ . յետոյ  
վիրաւորեալը «ահ , Դէտէլին» ար-  
տասանեց , ինկաւ գետին և հոգին  
աւանդեց : Մերձակայ տուներէն  
Թուրքերը լեցուեցան որոնք յաջողե-  
ցան վիրաւորելով ձերբակալել երկու  
տւազակապետներն . անմիջապէս քա-  
ղաքին բանար դրին զանոնք : Հե-  
տեւեալ օրը մահուան գատապար-

տելով , երրորդ օրը կախեցին Դէտէ-  
լինը՝ ի ներկայութեան Դօնչօյի . իսկ  
Դօնչօ մէկ ամիս յետոյ կախաղան պի-  
տի ելնէր . այսպէս վճռած էին :  
Դէտէլին իւր մահուանէ առաջ գաղտ-  
նապէս մի նամակ գրեց Դօնչօյի , «  
րուն օրինակը աստ կը թարգմանեմք  
բառ առ բառ , Պուլղարիոյ բարերար  
անմանն Լիւպին Քարտվէլօֆի Հա-  
տընտիրներէն քաղելով .

«Որդեակ իմ Դօնչօ , պարտական  
կը թողում զքեղ առաջի Աստուծոյ ,  
եթէ իմ կամքս չկատարես , մահուա-  
նէս յետոյ գու ողջ մնալով տւագա-  
կապետ պէտք է ընտրուիս . թող Ս.  
Կարապետ օգնական լինի քեղ որ մեր  
թշնամետց բազում կոտորած տաս .  
բայց եթէ ձեռքդ բարձրացնես Պուլ-  
ղարաց վրայ և յանդգնիս սպաննել և  
կողոպտել զանոնք , այն ատեն Աս-  
տուծոյ պատժոյն արժանի լինիս և

քու վերջին միսիթաբանքդ թող լինի  
կախաղան :

1806 սեպտ. 20 (4) Դէֆէլին  
Հին թլանինա

Անցաւ մէկ տմիս Դէտէլինի մահ.  
ուանէն , եկաւ այն օրը որ պիտի ըս-  
պաննէին Դօնչօն ալ . բանտապահը  
որ միամիտ ծերունի մի Ալպանիացի  
էր , իմաց տուաւ Դօնչօյի թէ պիտի  
կախուէր : Մահուան գատապարտեալը  
քարաշէն բանտի երկրորդ յարկի մութ  
ունեկի մը մէջ կը գանուէր . իւր ըո-

(1) Ներկայ տարւոյս մէջ Ս. Բեդրըս-  
պուրկ հրատարակեալ «Դօնչօ» անուն  
տետրի մէջ վերոգրեալ Դէտէլինի նամա-  
կը կայ , որ ոռուերէն լեզուաւ Վրալին  
Քարավիլօֆի Հատքնտիրէն թարգման-  
ուած է . իսկ ես պուլզարերէնէ թարգ-  
մանած ատենս 1806 սեպտ. 20 թուա-  
կանը գտած եմ , մինչդեռ ոռուերէնէ  
թարգմանեալ վէպիկը միայն 18... թիւ  
նշանակած է :

ուանման լուրը առած օրուան երկ-  
րորդ գիշերը յաջողեցաւ սենեկին եր-  
կաթէ վանդակները կատրելով փախ-  
չիլ ի Սերպիա . անդ շարունակ ութ  
տարի կեցաւ Դօնչօ , յետոյ նորէն  
գարձաւ իւր հայրենիքը . իմացաւ որ  
Սթարա թլանինաի մէջ Բէթքօ անուն  
մէկը տսպատակութիւն կընէ , միա-  
ցու նորտ հետ և յաջողեցաւ բաւա-  
կան արբանեակներ ալ ունենալ : Այս-  
որէս 10 տարի եւս Դօնչօ իւր ասպա-  
տակութիւնը շարունակեց . երբ կը  
լսէր որ ընկերներէ մին Պուլզար կո-  
ղոպտած և կամ սպաննած է , կրակ  
կը թափէր նորա գլխուն , կը յանդի-  
մանէր զնա խրատելով որ ուրիշ ան-  
գամ չգործէ : 1815 թուականին Մու-  
րատ Պին-պաշի անուն հրէշը Տէլի-  
պաշներու և Քռճալիներու գլուխը  
անցած կը յարձակի Դօնչօյի գիւղին  
վրայ . սոքա քաջարասր կը պատե-  
րազմին . երբ ճակատամարտը կըսաստ-

կանայ , Դօնչօ իւր երկայն եարադա-  
նով կը յարձակի Մուշտ Պինդաշիի  
վրայ , նորա մարմինք մի քանի կտոր  
ընելէ յետոյ կը յանձնէ նորա հսդին  
Մուհամետի : Նոյն ատեն մի ուրիշ  
Տէլիպաշ մ'ալ կը վիրաւորէ Դօնչօն  
ճիշդ կուրծքին մէջտեղէն և այսպէս  
կը վերջանայ Դօնչօի կեանքը 1813  
թուականին :

4.

ԿԸԼԲՊ Վ.08Վ.08Ա. (1)

Սա ծնու 1783 թուականին յԱ-  
րեւելեան Բումէլի Քալօֆէք քաղա-  
քին մէջ : Պուրզարք կը կարծէն որ  
այս անձը վէնէռափ (Vénéra-Առա-

(1) «ԿԸԼԲՊ» կը նշանակէ պուրզարք լեզ-  
ուով «աղաւնի» . այս անձը շատ գեղե-  
ցիկ լինելուն համար Աղաւնի անունը տը-  
ռած են Պուրզարք :

զիկ) յեղէն սերած է . ուստի արժան  
կը գատեմք աստ նկարագրելու նորա  
դէմքը :

ԿԸԼԲՊ վօյզօտա երկայնահասակ ,  
յաղթանգամ , վարդագոյն այտերով ,  
կապոյտ աշերով , գեղնագոյն մե-  
տաքսանման մազերով , երկայն ե-  
րարակ պեխսերով , ձիւնափայլ սպի-  
տակ գէմքով մի գեղեցիկ անձ է ե-  
ղեր . շատ անգամ նորա թշնամի-  
ները գեղեցկութեանը վրայ գթալով  
նորա գէմք զէնք չգործածել երգուըն-  
ցոծ են : Սորա աւազակապետ ըլլա-  
լուն բուն պատճառը այս է . իւր հայ-  
րը Տէլիպաշիի ատրճանակի հարուա-  
ծէ մեռած ըլլալով , ԿԸԼԲՊ այնպէս  
ուխտեր է որ միշտ Տաճկաց գէմ պա-  
տերազմելով իւր վրէժը առնու : Ա-  
ռաջին անգամ սա 500 արբանեակ-  
ներով գիշեր ատեն կը յարձակի Թրը-  
նօվա քաղաքի վրայ և մեծ կոտորած  
կուտայ Տաճկաց , երեք օր եւս քա-

զաքին կը տիրէ , Տաճկաց կիները  
քրիստոնէութեան կը գարձնէ , իսկ  
Տէլիպաշի և Թուճալի ուր որ կը գըտ-  
նէ , ամենքն ալ որէ կանցունէ , և երբ  
կը տեսնէ որ քաղաքը պաշարելու  
համար Թրքաց մի քանի բանակներ  
զրկուած են , անկարող կը լինի դի-  
մագրելու և գիշեր տաեն խոյս կու-  
տայ անկից աւզգակի ի Շիրքա Պալ-  
քան : Ամիս մը յետոյ Գըղանլըք և Զա-  
դարաց քաղաքներու վրայ կը յարձակի .  
Հոս ալ բաւական կատարած կուտայ  
Տաճկաց . վերջապէս վիրաւորուելով  
կը մեռնի Տոէնօլու գիւղին մէջ 1817  
թուականին : Սորտ գեղեցիկութեանը  
և քաջագործութեանը վրայ մինչեւ  
հիմա կը խօսին Պուլլարք :

5.

Մ1.08Էն Վ.08Վ.080.

Ծնաւ 1797ին Պուլլարիոյ Ելքնա  
քաղաքին մէջ : Սորտ ապստամբ լի-

նելու պատճառն այս եղած է . իւր  
երիտասարդ քոյրը Տաճիկը բռնու-  
թեամբ առեւանդ ելով կը թրքացնեն .  
Մլատէն սխերիմ ըլլուզվ , իւր քոյրը  
կնութեան առնող Թուքին սենեակը  
կը մռնէ երեկոյ մը և կոպաննէ զնա .  
յետոյ քոյր և եղբայր խոյս կուտան  
Պալքանի մօտակայ գիւղի մը մէջ բը-  
նակելու : Այս օրէն Մլատէն կոկսի  
50-60 արբանեակներով շրջագայիլ և  
Տաճկաց գիւղերու վրայ կը յարձակի .  
այսպէս երեք տարի շարունակ իւր  
հայրենի հողի վրայ մեծամեծ չարիք-  
ներ կը հասցնէ Տաճկաց . հարուստ  
Տաճիկներն կը կողոպտէր , ստակ , եղ ,  
ոչխար կը տանեէր , յետոյ Պուլլար գիւ-  
ղացւոց կը բաժնէր զանսնք . ուր որ  
կը գիմաւորէր Մուհամմէտի սերլնդ-  
եան , առանց բան մը հարցնելու կը  
սպաննէր . շատ անդամ ալ թրքու-  
հիներու ականջները կտրելով կը թու-  
զուր : Յիրտւի Մլատէնի արշաւանքը

քիչ ժամանակ տեւեց , բայց շատ կոտորած տուտու Տաճկաց . կան այնպիսի Պուլդար ապստամբապետներ որ շարունակ 10-15 տարի թափառած են Պալքաններու մէջ , բայց հաղիւ 5-10 թշնամի սպաննած են . բայց Մլատէն գրէթէ ամեն օր գոնէ մէկ թուրք պիտի որսոր սպաննելու համար : Եթէ մէկը Մլատէնի մօտ նստէր , ճիշդ այն հստը պիտի առնուր նորտ վրայէն , ինչպէս մարդ մը մաշվաճառի մը վրայէ կառնու , արեան գէշ հստը . իւր զոհերուն արեան բիծերը կը տեսնուէին Մլատէնի հաղուստին վրայ : Օր մը , երբ կիմանայ որ Օսման-Բաղարի Քոճալիներու աւազակ խումբերն իւր վրայ յարձակելու կը պատրաստուին , Աերպիս կը փախչի և մի քանի ամիս յետոյ անդ հիւանդանալով կը մեռնի 1821 թուականին :

6.

Կէօրկի Սթօթքօֆ

Կէօրկի Սթօթքօֆ ծնաւ . վետրվ Յին . 1806 թուականին , Արեւելեան Բումէլիի Քօթէլ (Քաղան) քաղաքը : Սորա քաջագործութիւնք ալ խիստ զարմանալի են : Կէօրկի հազիւ 20 տարեկան էր , Մլատէն Վոյվոտայի մահուանէն յետոյ սկսաւ Տաճկաց գէմ մաքուաիլ : Տեսներով Օսման-Բաղարի և ծումատի Քոճալիներուն Պուլդարաց գէմ գործած հարստահարութիւններն որոնք այն թուականին բուլոր ճանետպարհի անցքերը բանելով անգագար Պուլդար վաճառականներու և գիւղացիներու վրայ կը յարձակէին , կը սպաննեին , կը կողոպտէին և մեծամեծ չարիքներ կը հասցաւնէին քրիստոնեայ ժողովրդոց ,

Կէօրկի յաջողեցաւ Քօթէլ գաւառի  
Պուլղար Երիտասարդները սուք հա-  
նել և նոցա տպատամբապետ լինե-  
լով ոկտաւ յառաջնառլ գէպի Օսման-  
Բաղար : Սթօյքօֆ օրոշեց Թբքաց  
Բամազան պայրամի օրը յարձակիլ  
նոցա վրայ, և այնպէս ալ ըրաւ . այս  
առիթը լաւ պիտի նպաստէր Պուլ-  
ղարաց, քանզի Քռճալի խումբերը  
քաղաքաց և գիւղօրէից մէջ կը գըտ-  
նուէին պայրամը տօնելու համար :  
Յարձակումը կախի և Տաճկաց գէմ  
սոսկալի ճակատամարտ մը տալով Օս-  
ման-Բաղարի չըջակոյ Տաճիկ գիւղե-  
րը մախիր գարճնելէ յետոյ կը փախչի  
ի Պէստրապիա . անդ մէկ տարի թա-  
փառական կը ըրջի , յետոյ զինավարժ  
լինելու համար՝ Առուաց 16րդ բանա-  
կի մէջ կամառոր զօրք կը գրուի : Եր-  
կու տարուան մէջ Սթօյքօֆ քարի-  
թանութեան (Հարիւրապետ) աստի-  
ճան կառնու . Երեք ամիս յետոյ առ-

աօ-Թբքական պատերազմի կը ծագի  
1828-29ին . Սթօյքօֆի բանակն ընդ-  
հանուր պատերազմական զօրավարի  
հրամանաւ կը զրկուի Սիլիստրէ քա-  
ղաքը պաշարելու . նա սիրով կըն-  
գունի այս նպաստաւոր պաշտօնը  
քանզի իւր սիներիմ թշնամոյն գէմ  
պիտի պատերազմէր : Սիլիստրէ ժա-  
մանալէն յետոյ առաջնին փորձ մը-  
նելու նպատակաւ կը յարձակի քա-  
ղաքին վրայ . անշուշտ կուզէր իմա-  
նալ Օսմանեան զօրաց զօրութիւնը .  
բայց անյաջող կը գառնայ : Հետեւ-  
եալ օրը նորէն կը յարձակի և սոս-  
կալի ճակատամարտէ մը յետոյ , կը  
պաշարէ քաղաքին բերգր . նոյն մի-  
ջոցին մի քանի վաշտ Ռաւուաց զօր-  
քեր ալ վրայ համոնելով . Սթօյքօֆի  
բանակին հետ կը միանան և կը ոկտին  
քաղաքը ամեն կողմէ սմբակուծել :  
Օսմանեան բանակները երեք օր գի-  
մագրելէ յետոյ կը սափառուին անձ-

Նատուր լինել : Այսպէս իւր քաջութեամբը բաւական տաեն կը տիրէ Սիլիստրէ քաղաքին . յետոյ պատերազմը կը վերջանայ , հաշտութիւն կը հրատարակուի և Աթօյքօֆ ի վարձառութիւն իւր քաջադործութեանց , Ռուսիոյ կայսեր կողմանէ «Ավետի Աննա»ի ( չեմ գիտեր ո՞ր աստիճանի ) շքանշանը կընդունի : Զորս տարի եւս Ռուսիոյ մէջ կը մնայ . գարձեալ հայրենասիրութեան կայծը կը բռնկի որբախն մէջ , հայրենեաց փրկութեանը ծառայելու նպատակաւ 1833 թուականին կը գառնայ իւր հայրենիքը ի Պուլզարիա յեղափոխութիւն յարուցանելու . քիչ ժամանակի մէջ 12 հազար Պուլզար կամաւորներ կը պատրաստէ Տաճկաց գէմ պատերազմելու համար :

Զմունանք յիշել թէ Աթօյքօֆ Ռուսիոյէն հայրենիք վերադարձած ժամանակ 300 կտոր զէնք Թուլայի

գործարաններէն գնելով մինչեւ Ռումանիա բերած էր իւր հետ : Գործերը կարգադրելէ յետոյ յաջողեցաւ զէնքերը ծածկապէս Պուլզարիա փոխագրել և Պալքանի շըջակայ գիւղացւոց բամնելով ուսոյց նոցտ թէ ինչպէս պէտք է գործածեն : Պատերազմական գիրքեր պատրաստելով , 1834ի մայիս ամսայ սկիզբները սկսաւ պատամբութիւնը . վայ այն Թուրքին որ Աթօյքօֆի ձեռքը կանցնէր : Երկու ամիս շարունակ տեւեց այս պատամբական պատերազմը . Օսմանեան զօրաց բանակները , Տէլիպաշիներու և Քոճալիներու խումբերը իրենց անյաջողութիւնը տեսնելով ըստիպուեցան ետ քաշուիլ բաւական կոտորած տալով :

Աթօյքօֆ յեղափոխութիւնը յառաջ տանելու նպատակաւ կը սկսի շըջագայիլ Տրէնօվայի և Թրնօվայի գաւառաները ապստամբութիւն քա-

բողելու , բայց աւազ սր Սթօյքօֆ  
Թրնօվտ քաղաքին մէջ կը ձերտակալ-  
ուի և անմիջապէս կը բանտարկուի  
Վիտինի բերդին մէջ . յետոյ Վիտինի  
կուսակալ Հիւսնի փաշան եղելութիւ-  
նը կիմացունէ ի Կ. Պօլիս առ Բ. Գուռն-  
Քիչ օրէն Կ. Պօլիս կը զրկուի Սթօյ-  
քօֆ Սուլթան Մահմուտի հրամանաւ .  
ապատամբագետը տռանց անհանգիստ  
լինելու հասաւ Կ. Պօլիս . Թուրքեր  
շատ քաղաքավարութեամբ և մար-  
դասիրութեամբ կը վարուէին նորա  
հետ : Սուլթան Մահմուտ երբ կիմա-  
նայ թէ Սթօյքօֆ հասած է Կ. Պօլիս ,  
անմիջապէս իւր գէմը կը կոչէ , հիա-  
նալով նորաքաջագործութեանցը վը-  
րայ : Յազիթողն Սթօյքօֆ ներկայա-  
ցաւ առիւծի նման ոլորտած պեխե-  
րով և ունենալով իւր երկու ծնոտ-  
ներուն վրայ ոռուսական ձեւով իւր  
երկայն մորումն որ բարկութենէն  
ծովու ալեաց նման կը ծածանէր իւր

գէմքի վրայ : Սուլթանը վայրիկ մի  
նորա ահռելի կերպարանը դիտելէ  
յետոյ , սկսու հետեւեալ խօսքերը  
արտասանել մեզմ ձայնիւ . Սթօյքօֆ ,  
ես քու անունդ շատ տարիներէ ի  
վեր լսած եմ , կը փափաքէի քու  
գէմքդ տեսնելու , այժմ գոհ եմ այս  
վայրկենիս որ աչերո կը տեսնեն քու  
գէմքդ . կարծեմ դու ես Սիլիստրէի  
յաղթողն որ իմ հազարաւոր բանակ-  
ներու մեծամեծ կոտորածներ տալով  
Ռուսիոյ կայսեր ալ սիրելի եղած ես .  
թող ուրեմն աղատէ Ռուսիա դքեզ  
իմ ձեռքէս . բայց ահա ես կը չնոր-  
հեմ քեզ կեանքդ զի ես վատութիւն  
կը համարիմ քաջ մարդիկ սպաննել .  
դու մի քաղաքական յանցուոր լի-  
նելուդ համար առանց դատի են .  
թարկելու մշտնջենաւոր աքսորի կը  
գատապարտեմ գքեզ ի Քօնեա , անդ-  
աեղական կառավարութեան սնտու-  
կէն պիտի ընդունիս հազար դրուշ

ամսաթոշակ , փոխարէն քաջագործութեանդ . խօսէ ուրեմն , Օսմանեան պետութենէն ի՞նչ գէջութիւն տեսար որ նորա գէմ տպստամբելով պատճառ եղար այնչափ արիւնչեղութեան . միթէ զաւակ մը իւր հաւատարիմ ծնողքը կապաննէ . մարդիկ ինչ ազգէ ալ լինին , ամենքն ալ եղբայր են . միթէ գոչ չե՞ն Պուլզարները Օսմանեան պետութեան հպատակ լինելնէն : Սթօյքօփ անտարբերութեամբ կը լսէր Սուլթանի խօսքերուն . յետոյ նորա հարցման անմիջապէս բարկութեամբ պատասխանց . Այս , գուք այնպիսի եղբայրներ էք քրիստոնեալ հպատակաց , ինչ պէս կայէնն ալ Արէլին եղբայրն էր . աւելի լաւ է ինձ համար մեռնիլ քան թէ օտար երկնքի մը տակ ապրել . բայց , Վեհափառ Տէր , պէտք է գիտնաք որ Սթօյքօփ իւր ետեւէն ահեղ վրէժ մը պիտի թողու , վրէ՛ժ

մը , որ երբէք չպիտի յագենայ և չը պիտի մարի ձեր արեամբը . ես որ քու հազարաւոր զօրացդ գէմ պատերազմած եմ քաջաբար , ես որ սիրելի եղած եմ Ռուսիոյ կայսեր և իմ թշուառ Ազգիս , ես որ կողբամ իմ հայլենիքն մինչ գու թոշակ կը խոստանաս ինձ , ես կուզեմ սուր ի ձեռին մեռնիլ այն հողի վրայ որ զիս մնոյց տարիներով : Վեհափառ թագաւոր , անշուշտ հետաքրքիր ես իմանալու մեր ապստամբութեան բուն պատճառը . Զեր Վեհափառութիւնը ստիպեց զիս որ ճշմարտութիւնը խստովանիմ որպէս զի գուք ալ իմանաք Զեր պաշտօնէից գործերը . յետոյ գատեցէք . մոխիկ ըրէք ուրեմն : Այսօր Պուլզարք իբրեւ գերի և կերտկուր ստեղծուած են այն հրէշ Տէլիպաշիներու և Քոճալիներու . Եթէ կը սիրէք արդարութիւնը , Եթէ կը փաքիք որ Պուլզարը հանգիստ կեանք

վայելէ , նախ այդ հրէշները պէտք է  
մաքրէք Պուլղարիաէն . նոքա տմենքն  
ալ երկնալիքէժ հրէշներ են որոնք ան-  
խնոյ կը հարսւածեն խեզճ տառապ-  
եալ Պուլղարները . անուրանալի հրշ-  
մարտութեամբ կապացաւցանեմ թէ  
միշտ Պուլղարը կը ցանէ իւր արտին  
մէջ և երբ ժամանակը կուգայ հրն-  
ձելու , այն առեն Տաճկին իրաւունքն  
է այն . և այսպէս Պուլղարը կը մնայ  
անօթի և առանց սերմի . գարձեալ  
երբ փոքրիկ մաս մը շահելով Պուլ-  
ղարը կը հարստածայ , անմիջապէս չա-  
րտչար կը հարստահարէ զայն Թուրքը  
մերկացնելով բոլորովին : Կամունա-  
նայ երիտասարդ Պուլղարը , այդ հր-  
շէները կը զուարճանան անոր մատաղ  
կնոջ հետ ամիսներով լեռներու և  
քարալրներու մէջ պահելով զնա և  
կամ բոլորովին կը կորսնցաւնեն թըր-  
քացնելով զնա : Արդարութիւն և ի-  
րաւունք . այս բառերը . օտար են

Պուլղարաց նկատմամբ ձեր բոլոր գա-  
տարաններու տոջեւ : Իմ այս պատ-  
մածներս ստուգելու համար ելէք ան-  
գամ մը մեր երկիրը շրջագայելու և  
պիտի տեսնէք անդ հաղարաւոր սրբ-  
ատճմիկ տեսարաններ . տմեն օր պի-  
տի տեսնէք օր անմեղ արիւններ կը  
հսոին . վերջապէս պիտի տեսնէք ,  
կըսեմ , մեր սրբազն տաճարները  
սանակախ եղած . մինչեւ ե՞րբ պիտի  
կրէ մեր ազգը այս անսանելի ցաւե-  
րը . գարձուր անզամ մը աչքդ Պուլ-  
ղար հպատակիդ վրայ և կարծեմ անդ-  
պիտի տեսնես մի միայն արտասուք  
և թշուառութիւն . և եթէ այս վի-  
ճակը շարունակուի , իմ մահուանէս  
յետոյ պիտի ելնեն այնպիսի քաջեր  
որոնք . արիւն թափելով վերջապէս  
պիտի կարողանան տղատել Պուլղար  
ազգը ձեր ձեռքէն , Պուլղարը միշտ  
վրէժինդիր պիտի մնայ Օսմանեան  
պետութենէն . . . :

Այս խօսքեր խօսելէն յետոյ ,  
Սթօյքօֆ մի քանի Թուրք պաշտօ-  
նէից հակողութեամբ կը զրկուի իւր  
աքսորատեղին և անդ ութ տարի  
մնալէ յետոյ , հայրենասիրութեան  
կրակին զոհ եղած կը մեռնի ի Քօնիա  
(Ասիս) 1842 թուականին :

7.

ՍԱՎԱ ՍԹՈՅՔՈՅ ՈՒԹՈՎԱՐԻ (1)

Աչաւասիկ մէկ մեծանուն բարե-  
րարի մը կենսագրութիւնը որուն մար-  
մինը Պուքքէջմ մնացած ըլլալով ,  
Պուլզար կառավարութիւնը Հազար  
Փրանդ ծախսեց և նորա սսկորներն  
Սաֆիա փոխագրեց 1885ի յունիսի 2ին ,  
կիրակի օրը , մեծաւ հանդիսիւ :

(1) Սորա հայրը Քաղան Քաղաքի մօ-  
տակայ Ուաքօվա անուն գիւղէն ըլլալուն  
համար , Ուաքօվաքի մականունը առած է :  
Յ. Հեղին .

Սավա Ուաքօվաքի քաղաքագէտ ,  
բանաստեղծ և մէկ խօսքով փիլիսո-  
փայ մորդ էր . Ծնաւ 1823ի յունիս  
ամսոյ սկիզբները Արեւելեան Բումէ-  
լիի Գօթէլ (Քաղան) քաղաքին մէջ :  
Սորո անմոռաննալի լիշտատկները մին-  
չեւ ցայսօր կը պատուեն Պուլզարք  
ամենայն ջերմեռանդութեամբ : Ուա-  
քօվաքի նոխ իւր ուսումն առաւ-  
տեղւոյն պուլզարտկան ազգային վար-  
ժարանին մէջ . յետոյ գնաց Յունաս-  
տոն և անդ լրացաց իրաւաբանա-  
կան ուսումը Աթէնքի համալսարանին  
մէջ : Սա կը խօսէր և կը գրէր պուլ-  
զարերէն , յունարէն , թուրքերէն ,  
ռուսերէն , գաղղիերէն և գերմանե-  
րէն . Երբ Ուօմանիա անցաւ , անդ  
սովորեցաւ ուսումնական լեզուն ալ :

Երբ 28 տարեկան էր Ուաքօվաքի ,  
ուխտեց որ իւր կենաց մինչեւ վերջին  
շունչը աշխատի մի միայն հայրենեա-  
ցը փրկութեանը համար : Եւ այնպէս

ալ ըրաւ : Առաջին անգամ գողտնի  
յեղափոխական ընկերութիւններ կազ-  
մեց օտար տէրութեանց աղտոտ քա-  
ղաքաց մէջ , այսինքն Պէստրապիոյ  
մէջ ի Պօլկրտոտ (քանդի Պէստրապիոյ  
մէջ պալքանեան ժողովուրդներն են  
որ հին ժամանակէ ի վեր Տաճկաց  
Հարստահարութեանց չգիմանալով  
գաղթած են անգ աղատ մնալու հա-  
մար ) , Ռօմանիոյ մէջ ի Պուքրէշիջ ,  
Սերպիոյ մէջ ի Պէլկրտոտ և Մօնթէ-  
նէկրոփի մէջ ի Ցէթինոս : Ռաքօվոքի  
այս ընկերութեանց ժողովոյ նախա-  
գահն էր որուն կեդրոնն էր ի Պուք-  
րէշիջ : Այդ երեք քաղաքաց մէջ  
ժամանակովավեր կային որոնք մէկ մէկ  
գործադիր պաշտօնէի միջնցաւ կը  
կառավարուէին և արդ պաշտօնեայք  
Պուքրէշիջ կեդրոն ճանչնալով , կը  
թղթակցէին Ռաքօվոքի հետ : Նոյն  
ժամանակները Պալքանի մէջ շատ մը  
առաջտատկ խռոմիեր կը գանուէին .

Ռաքօվոքի նոցա գաղթանապէս զէնք  
և հրանիւթ կը զրկէր Ռուռանուգէն ի  
Թրնօվա և անկից կը փոխագրէին  
Պալքան : Այդ ժամանակովավերն ու-  
նէին նաեւ իրենց գաղտնի թղթա-  
տարներ որոնք զարմանալի վարպե-  
տութեամբ կը գործէին այդ փափուկ  
արհեստը . Ռաքօվոքի երբ Պուլզո-  
րիոյ գործակառարաց մէկուն գաղտ-  
նի մի նամակ և կամ մի շըտերական  
պիտի ուղարկէր , ուղղակի նորա հաս-  
ցէն և կամ անունը չէր գրուեր նո-  
մակին վրայ , այլ Թուրք կառավա-  
րութեան բարձրաստիճան Պուլզոր  
պաշտօնէի մը և կամ հարստահարիչ  
Պուլզոր չօրպաճիի մը անունն կը կրէր  
նամակին պահարանը և թղթատարը  
գիտէր որ նամակը ուղղակի Գործա-  
գիր պաշտօնէին ձեռքը պիտի յանձ-  
նուէր . և եթէ ձերբակալուէին այդ-  
պիտի գաղտնի նամակիներ , վայ այն  
թրքառէր , փառամոլ և հարստահա-

ըիշ Պուլզար չօրպաճիին . կառավա-  
րութիւնը ուղղակի զինք ձերբակա-  
լելով և գու քօմիքա մը ես ըսելով  
պիտի բանտարկէր զնա , քանզի նա-  
մակին վրայ իւր անունը գրուած էր  
և անկարող կը լինէր ինքինք արդա-  
րացնելու : Այսպէս հայրենեաց թրշ-  
նամի եզրիներէն ալ վրէժ կառնէին :  
Իսկ ընդհակառակը շատ անդամներ  
ալ երբ գաղտնի թղթատարը օտար  
երկրի մը սահմանադլիւէն Տաճկաստան  
կանցնէր , իւր վրայ ունեցած նամակ-  
ները մաքսատան պաշտօնեայք քըն-  
նելով ազատ կը թողուին , կարծելով  
թէ յիբաւի այն ինչ Պուլզար պաշտօ-  
նէին և կամ չօրպաճիին համար է  
այդ նամակը : Ահա Ռաքօվսքիի մի  
ճարտարութիւնը :

Ռաքօվսքի ամեն տարի մայիս  
ամառ սկիզբները , այսինքն Սերպիոյ  
դինուորագրութեան ժամանակ , շատ  
մը Պուլզար երիտասարդներ իւր հետ

առնելով կը տանէր ի Սերպիա և անդ-  
նոցա բանակներու մէջ կամաւոր գրել  
կուտար . երկու տարի կը կենային  
նոքա . յետոյ ուղղակի Պուլզարիա  
կը վերադառնուին Տաճկաց գէմ պա-  
տերաղմելու : Ռաքօվսքի այնչափ  
սերտ բարեկամութիւն յառաջ բերած  
և սիրելի եղած էր Սերպիոյ Միխա-  
յէլ Օպուէնսավիչ իշխանին որ շատ ան-  
գամ հարիւրաւոր հրացաններ և ըէ-  
գոլվէրներ կը նուիրէր զինուորական  
շրջանը աւարտող Պուլզարաց իրենց  
հայրենիքը վերադառնալու ատեն ,  
ի վարձատրութիւն ծառայութեան :  
1876ին տեղի ունեցած սերպօ-թրշ-  
քական պատերազմի ժամանակ ալ 15  
հազարէ աւելի Պուլզար երիտասարդ-  
ներ օդուութեան գնացին Սերպերու :  
իրենցմէ հազիւ 1-2 հազարը ողջ ա-  
ռողջ վերադարձան իրենց հայրենի-  
քը . գրեթէ 13 հազարը պատերազմի  
4

դաշտը մեռան և կամ վիրաւորուելով, աշխատելու անկարսղ, առանց ձեռքի և առանց սուքի մնացին: Ես ինքս ականատեսու լինելով կը վկայեմ. Աէքսինաչի և Պապինօ Կավայի պատերազմներուն մէջ հարիւրաւոր վիրաւորեալ և մեռեալ Պուլզար կամաւորներու հանդիպելով, վիրաւորներու վէրքերը գարմանած եմ զի այն թուականին Օսմանեան բանակին մէջ վիրաբոյժ էի: Աղնիւ ընթերցող, արդեօք ինչ նպատակաւ Պուլզարք օտար աղքի մը աղատութեան համար արիւն կը թափէին. առաջին՝ անոր համար որ Սերպիացիք ալ օր մը Պուլզարաց օգնութեան հասնէին. երկրորդ՝ իրենց վրէժը կը լուծէին Տաճկաց դէմ պատերազմելով: Ամեն անձնուրաց Դործագիր պաշտօնեայ երդուեալ էր առաջի Աստուծոյ և Սրբոց, որ եթէ, Աստուծ մի արացէ, իրենց պաշտօնավարութեան ժամանակ Տաճկաց

ձեռքը անցնին, առանց ճշմարտութիւնը խոստովանելու դատաւորաց առջեւ, իրենց գագտնեօք հանդերձ ամփոփուին սեւ հողին մէջ, Սոքա կը շրջագայէին տիւ և գիշեր Պալքաններու մէջ, կը սիրէին զիրար, ինչպէս որ կը սիրէ մարդ մը իւր Աստուծը և կատէին թշնամինին, ինչպէս որ կատէ գերի մը իւր տէրը: Սավա Ուաքօվսքիի մի քանի հետաքրքրական գործերը արժան կը գատեմք առա յիշելու, ընթերցողին գաղափար մը տալու համար քաջ հայրենասիրի մը կեանքին վրայ: 1854ին երբ ռուսո-թրքական պատերազմը կը ծագի, Ուաքօվսքի անմիջապէս Շումլա կերթայ և կը յաջողի Տաճկաց զինուրական ատենի (Էօրգիէ Մէծլիսի) առաջին գրագրութեան պաշտօնը ստանձնել (Ուաքօվսքի քաջ հմուտ էր թրքական լեզուի), այս նպատակաւ որ Ռուսիոյ տէրութեան

մի ծառայութիւն մատուցանէ . կը  
սկսի գագտնի նամակներ ուղարկել  
ի Ռուսիա , Պուքբէշի ռուսական դես-  
պանին միջնորդութեամբ : Երկու ա-  
միս շարունակ զինուորական դադա-  
նիքը հաղորդելէ յետոյ Ռաքօվսքի  
կը ձերբակալուի . երեք օր զինուո-  
րական ատենին առջեւ դատուելէ  
յետոյ , մշտնչենաւոր բանտարկու-  
թեան կը դատապարտուի և կորոշեն  
զինք Ադրիանուագոլիս աքսորել : Ռա-  
քօվսքի 5 ձիաւոր ժանտարմայից հըս-  
կողութեան կը յանձնուի իւր աքսո-  
րավայրն տանելու համար . Նումիաէն  
շղթայակատ ճանբայ կելնէ . երկու  
օր շարունակ քալելէ յետոյ երրորդ  
օրը արեւը մարը մտնելու ատեն Քա-  
զանի մօտ Վօպէնիցա անուն գիւղը  
կը հասնին . ժանտարմայք և դատա-  
պարտեալը կը հիւրընկալուին Պուշ-  
դար չօրպաճի տունը . Ռաքօվսքի  
զատ սենեկի մը մէջ կը փակուի երկու

ժանտարմայից հսկողութեան տակ :  
Ռաքօվսքի հսկող Ալպանիացի ժան-  
տարմաներու հետ շուտ բարեկամա-  
ցաւ և համոզեց զանոնք որ մի քանի  
ժամի համար ձեռքերը կաշկանդող  
շղթաները քակելով աղատ թողուն  
որ հանգիստ քնանայ : Բարեսիրու  
մարդիկ . . . անմիջապէս նորա խին-  
դերքը կատարուեցաւ : Ռաքօվսքի  
նապաստակի նման քնանալ կը ձեւա-  
ցընէր . հաղիս կէս գիշելը մօտեցած  
էր , երկու հսկող Ալպանիացիք գե-  
տինը տարածուելով սկսան խորդալ .  
ոսքա յիրաւի կը քնանային , իսկ Ռա-  
քօվսքի արթուն էր . երբ տեսաւ որ  
երկու աղուշներն ամենախոր քունի  
մէջ էին , Պայրամի (1) մէջքէն երկայն  
դաշոյնը կամաց մը պատեանէն դուրս  
քաշելով , առանց ձայն մը հանելու ,  
ոստիկանաց կոկորդները կտրելով ըս-

(1) Պայրամ՝ Ալպանիացի ժանտարմայի  
անունն էր :

պաննեց . յետոյ առաւ մի հրացան  
և երկու դաշոյն , գիշերուան խաւա .  
րին մէջէն ուլացաւ գնաց վօպէնիցա  
գիւղէն . լեռներ և ձորեր անցնելով  
անլուանգ յաջողեցաւ անցնիլ ի Ռօ-  
մանիա և այսպէս աղատեցաւ բար-  
րարոսաց ձեռքէն :

ի Ռուսճուգ նիքոլա Պալքանսքի  
անուն ծերունի հայրենասիրին քով  
Ռաքօվսքիի իւր ձեռօք գրած մի  
քանի նամակներն տեսայ որոնց մին  
բառ առ բառ թարգմանելով կը նր-  
շանակեմ հոս որ իւր բարձր և աղատ  
գաղափարի տէր լինելը կը հաստատէ :

«1864 , 23/4 ապրիլի , Պուքրէշթ

«Հայրենակից իմ եղբայր և լն .

«Ահաւասիկ յեղափոխութեան ո-  
րոշեալ ժամանակը կը հասնի . մէկ ա-  
միս յետոյ պատրաստ եղէք ձեր վեր-  
ջին ողջոյնը աշխարհի տալու . շուտով  
3-4 հարիւր ձիեր գնելու ձեռնարկե-

ցէք որոնք մեծ ծառայութիւն պիտի  
մատուցանեն մեզ . պէտք է նաեւ որ  
Թրնօվախ շօսէն (լսճուղի) Մանասթ .  
բիցաէն (1) մինչեւ Թրնօվա մեր ձեռ-  
քը լինի . գարձեալ Թրնօվախ կառա-  
վարական պաշտօնատունը և գորանո-  
ցը այրելու համար (100) հարիւր հօ-  
խա հրանիւթ մատակարարելով զե-  
տեղելու պաշտօնը (օ-օ) . . . ին (2)  
յանձնեցէք . նա միայն կարող է ճար-  
տարութեամբ գործադրել այդ փա-  
փուկ պաշտօնը : Պիտի գրեմ ձեզ  
գարձեալ քիչ օրէն : »

Հայրենասիք

Ս. ՌԱՔՈՎԾԻ

(1) Մանասթբիցա Թրնօվայի ճանբուն  
վրայ մի ընդարձակ գիւղ է , Ռուսճուքէ  
42 քիլոմէթր հեռաւորութեամբ . իսկ  
Ռուսճուքէ մինչեւ Թրնօվա 119 քիլո-  
մէթր է :

(2) (օ-օ) Այս նշանը մի յեղափոխա-  
կան Պուլղարի անունն է որ Ռաքօվսքի  
հնարած է :

Ուաքօվսքի յաջողեցաւ որոշեալ  
ժամանակին յեղափախութիւն յարու-  
ցանելու . Երկու կողմանէ բաւական  
կոտորած տրուեցաւ , յետոյ տիրեց  
խաղաղութիւնը : 1865ի առենները  
Ուոմանիոյ մէջ մեծ և վտանգաւոր  
խռովութիւն մը ծագեցաւ , այսինքն  
Ուոմանք երկու կուսակցութեան բաժ-  
նուեցան որոնց մէկ մասը կուզէր գա-  
հընկէց անել իրենց Գուղա անուն  
իշխանը : Իշխանը պաշտպանող պահ-  
պանողական կուսակցութիւնը յաղ-  
թուեցաւ . իսկ Գուղաի թշնամիները  
յաջողեցան զինքը գահընկէց ընելով  
աքսորել ի Մոլտավիա : Այս թուա-  
կանին որովհետեւ Ուոմանիա հարկա-  
տու էր Օսմանեան պետութեան , ոա  
մոտագիր եղաւ 30,000 զօրք զրկել  
Ուղահներու վրայ ի զգաստութիւն  
երկու կուսակցութեանց : Երբ Ուո-  
մանք իմացան Օսմանցիներու այս գե-  
տաւորութիւնը , անմիջապէս պատ-

բաստուեցան դէմ դնել Օսմանեան  
զօրաց և չթողուլ որ իրենց հողի վը-  
րայ ոտք դնեն թշնամիք : Պ. Պոա-  
թիանօ որ այն թուականին ալ ներ-  
քին գործոց նախարար էր , իւր մաե-  
րիմ բարեկամը Պ. Ուաքօվսքին իսկոյն  
իւր մօտ կը կոչէ . այդ վտանգին  
գարման մը տանելու համար , բոլոր  
օրը կը խորհրդակցին Թուրք զօրաց  
գիմագրելու մասին : Պ. Պոաթիանօ  
տամն հաղար պուլղար կամաւորաց  
պէտք ունենալը կիմացունէ Ուաքօվս-  
քիին . ուոման նախարարի այս առա-  
ջարկութիւնը անմիջապէս կընդունի  
Ուաքօվսքի , հետեւեալ պայմաններով.  
Ե՛ Պ. Ուաքօվսքի պիտի կարենայ 3-4  
օրուան մէջ 10 հազար Պուլղար հա-  
ւաքել . Բ՝ Ուոման կառավարութիւնը  
հրացան և վառօդ պիտի բաժնէ 10  
հազար պուլղար կամաւորաց . Գ՝ Պուլ-  
ղար կամաւորները միայն Դանութի ե-  
զերքը կենալով Ուոմանիոյ սահմանա-

գլուխը պիտի հոկեն որ Օսմանեան զօրքեր դիւրութեամբ չի կարենան անցնիլ Դանուրէն . Դ՝ Պուլզար կամաւորաց համար պատամսանատումի միայն Ռաքօվսքի պիտի լինի իւր Ազգին : Պ. Պուաթիանօ և Ռաքօվսքի կ'ստորագրեն պայմանագիրը . յետոյ ռաման նախարարն դառնալով Ռաքօվսքիի կըսէ շնորհակալութեամբ . Ասի մեծ և անմռուանալի օգնութիւն մը պիտի լինի Ռոմանիոյ համար և Պուլզարաց այս աջակցութիւնը և նոցա քաջութիւնը մեծ տեղ մը պիտի բռնեն Երկու աղքաց պատմութեան Էջերուն մէջ : Ռաքօվսքի և Պուաթիանօ զիրար համբուրելով կը բաժնուին . վերջինը կը խրոխտայ իւր օգտակար յաջողութեանը վրայ :

Մէկ ժամ յետոյ Ռաքօվսքի իւր մտերիմ Պուլզարները հաւաքելով կիմացունէ Երկու դիւրանագիտաց մէջ տեղի ունեցած խորհրդակալութեանց

արդիւնքը : Երբ կը լսեն Ռաքօվսքիի բերնէն որ 3-4 օրուան մէջ 10 հազար պուլզար կամաւոր պիտի հաւաքէ , անմիջապէս կ'սկսին ամեն տեղէ Պուլզարներ կոչել որոնք անձնական գործերնին մէկդի թողլով կուգան Ռաքօվսքիի գրօշակին տակ կը համախմբուին ի Պուաքոէշթ . մէկ կողմէն նոցա տնուններն կարձանագրուին , միւս կողմէն իրենց զէնք կը տրուի . այսպէս աշալը լութեամբ երեք օրուան մէջ լրացուց 10 հազար հայրենասէր Պուլզարներ գրօշակի տակ առնելու գործը : Զորորդ օրը արշալուուին շրջաբերականաւ մը իւր մըտերիմ ընկերները (գործակատարներն) գարձեալ իւր մօտը կոչեց . զիրարբարեւելէ յետոյ , իւր դիտաւորութիւնը յայտնեց նոցա հետեւեալ փոքրիկ ատենաբանութեամբ . «Հայրենակից եղբայրներ , իմ խորին շնորհակալութիւնս ձեզ յայտնելու պար-

տաւորեալ եմ . շատ գոհ եմ , ինչ որ  
խնդրեցի ձեզմէ , նոյնը կատարեցիք :  
Եղայրյներ , ահաւասիկ պատեհ ա-  
ռիթ մը մեր տառապեալ հայրենիքը  
բարբարոս և ժանոտ թրքաց ձեռքէն  
ազատելու . ամենքնիո ալ միաբան  
ձեռք ձեռքի տալով աշխատինք հայ-  
րենեաց համար . վատ է այն որ տւե-  
լի կը սիրէ կեանքը քան թէ իւր Ազ-  
գը . ահաւասիկ հիմա պիտի տեսնէ  
Եւրոպա մեր հայրենասիրութիւնը և  
միանգամայն իւր քաջութիւնը : » Իւր  
ընկերները զարմացան Ռաքօվսքիի  
այս խօսքերուն վրայ և սկսան իրա-  
րու երես նայիլ . նոքո կը կարծէին  
որ Պուլզարները Ռոմանիոյ սահմանա-  
գլուխը հսկելու պաշտօնը միտյն ու-  
նին , մինչդեռ Ռաքօվսքի կը պատ-  
րաստուէր հայրենիքը ազատելու :  
Ռաքօվսքի հասկցաւ նոցա միտքը թէ  
ինչ ըսել կուզէին և անմիջապէս նո-  
ցա խօսքը ընդմիջելով ըսաւ . կը

հասկնամ թէ ինչ ըսել կուզէք . ա-  
հաւասիկ ձեզի տասն հազար Պուլ-  
զար քաջ կամաւորներ որ մինչեւ վաղ  
երեկոյ պիտի հասնին ձուրճէվո և  
անկից Դանուբի եզերքը պիտի բաժ-  
նենք կարգաւ . երբ Օսմանեան բա-  
նակները սկսին Բուսճուգէն Ռոմանիա  
անցնիլ , այն ատեն մենք ալ 10 հա-  
զար զինեալ Պուլզարներով մեր հայ-  
րենիքը անցնելով , այդ խառնաշփո-  
թութեան միջոցին մենք ալ պիտի  
համամք մեր նպատակին . Թուրքերը  
ի Ռոմանիա , իսկ Ռաքօվսքի իր Պուլ-  
զարներով ի Պուլզարիա : Ինչպէս որ  
արդէն ամենքնիդ ալ գիտէք , մեր  
ազգը պատրաստ է Պալքանի մէջ .  
արդ ժամանակ է միտքեամբ աշխա-  
տելու . ա՞հ , երբ Ռաքօվսքի իւր  
ոտքերը Պուլզարիոյ հոգին վրայ գնէ ,  
գիտացէք որ քար քարի վրայ չպիտի  
թողու . այս , եղբայրներ , երբ Պալ-  
քանի մէջ ինքինքս տեսնեմ , պէտք

է գիտնաք որ այն ատեն վրկուած է  
Պուլզարիա : »

Երկու ժամ վերջը պուլզար բա-  
նալիներ իրենց ազգային աղատ եր-  
գերը երգելով խռոմի խռոմի ճանբայ  
ելան Պուլզէշմէն ձուբէլո երթա-  
լու :

Երբ ազգի մը ճակտուագիրը սեւ է,  
նա թշուառ է միշտ : Ուաքօվսքիի  
յոյսը ի գերեւ ելաւ , քանզի նորա  
գիտաւորաւթեան լուրը կայծակի պէս  
շուտ հասաւ Պուաժիանօի տկանջը և  
սա գուշակեց որ եթէ Ուաքօվսքի  
Պուլզարիա անցնի իւր Պուլզարներովը,  
այն ատեն իւր երկիրը . Ռոմանիան ,  
մեծ վասնգի պիտի ենթարկուէր ,  
այսինքն Օսմանեան բանակները դիւ-  
րաւ պիտի կարենային ամբողջ Ուո-  
մանիան գրաւել . ուստի որոշեց ան-  
միջապէս ձերբակալելով Ուաքօվսքին  
բանտարկել և կամ աքսորել Ռոմա-  
նիաէն :

Բայց Ուաքօվսքի աւելի շուտ աե-  
ղեկացաւ Պուաժիանօի չար խորհր-  
դին . հասկցաւ որ մեծ փորձանքի  
պիտի հանդիպէր , կարելի էր որ  
կեան ըն ալ վտանգի ենթարկուէր .  
ուստի առանց վայրկեան մը վարսնե-  
լու և առանց ընկերներու իմաց տա-  
լու խոյս կուտայ Պուլզէշմէն ուղղա-  
կի ի Պուահիլա . անդ կապաստանի Տօք-  
թէօր Միուազի անուն Պուլզար բը-  
ժշկին քով : Երկու շաբաթ յետոյ  
խաղաղութիւնը կը տիրէ Ռոմանիոյ  
մէջ և Գառօլ՝ Իշխան (Prince) կլնտ-  
րուի . Ուաքօվսքի նորէն կը դառնայ  
Պուլզէշմէ և կ'ակսի իւր նախկին գոր-  
ծերը յառաջ տանիլ : Այսպէս երկու  
տարի եւս հայրենեաց վրկութեան  
համար աշխատելէ յետոյ , Պուլզէշ-  
մէի Սրիթալու Քոլց (Spitalu Coltz)  
հիւանդանոցին մէջ կը մեռնի թո-  
քախտէն (pneumonie) , 1867 նոյեմ-  
բեր ամսոյ 25ին , 42 տարեկան հա-

սակին մէջ , անմոռանալի յիշատակ-  
ներ թողլով իւր սիրելի Ազգին :

8.

ԼիիՊիհ ՔԱՐԱՎԵԼՈՅ (1)

Հայրենասէր , բանաստեղծ և ա-  
կադեմական . ծնաւ ազնուական ըն-  
տանիքէ , 1834 օգոստոս 2ին , Սրե-  
ւելեան Ռումելիի Քալօֆէր գիւղա-  
քաղաքին մէջ : Լիւպին հազիւ 18  
տարեկան էր , յանկարծ օր մը ան-  
յայտ եղաւ իւր հայրենի տունէն .  
Երեք ամիս յետոյ ծնողացը մի նա-  
մակ գրեց որով կիմացունէր թէ Մոռ-  
կուախ համալսարանը մտած էր ու-  
սում առնելու համար : 9 տարի շա-  
րունակ յաճախելէ յետոյ համալսա-  
րանական վկայագիրն ստանալով ,

(1) Պուլարիոյ նախկին հռչակաւոր  
նախարար Բէթքօ Քարավէլօֆի մեծ եղ-  
բայրն էր սա :

Հայրենեացը ծառայութիւն ընելու  
նպատակաւ Մոռկուաէն կը դառնայ  
ի Պուլքրէշթ , 1861 թուականին : Մի  
քանի ամիս յետոյ , Ռաքօվսքիի ա-  
ղաջանօք տուաջին նախագահ ընտ-  
րուեցաւ Պուլարաց գաղտնի Արե-  
ւելեան Յեղափոխական ժաղովոյն ի  
Պուլքրէշթ և սկսաւ կարգադրել ինչ  
որ պէտք էր . յեղափոխական Գոր-  
ծադիր պաշտօնէից հետ թղթակցու-  
թիւն ընելու համար , նախ յօրինեց  
պուլարերէն լեզուաւ մի այրբենա-  
րանի ոճով գաղտնի բանալի մը և  
սկսաւ թղթակցիլ . այդ գրութիւն-  
ները մի միայն Գործադիր պաշտօն-  
եալք կարսղ էին կարգալով հասկը-  
նալ , և եթէ դիպուածով այնպիսի  
նամակներ թուրք կառավարութեան  
ձեռքը անցնէին , ոչ ոք պիտի կարե-  
նար հասկնալ , բացի Գործադիր ան-  
դամներէն . յետոյ մի տպարան բացաւ-

և սկսաւ «Ավօպօտա» (ազատութիւն) անուն թերթ մը հրատարակել իւր խմբագրութեամբ . ամեն ամիս մէկ մէկ գրգռիչ տետրակիներ տպելով իր գաղանի թղթատարաց միջոցաւ ձրի . ապէս կը բաժնէր Պալքանի հարը . տահարեալ ժաղովրդոց . իւր աշխատութեան արդիւնքը եղող շահածդրամը դարձեալ իր աղգին կը դարձնէր : Ստոյդ ազբիւրներէ քաղելով կը վկայեմք թէ Լիւպին Քարավէլօֆ 4000 սոկիի մօտ ծախս ըրած է իւր քուկէն Պուլզարիոյ փրկութեանը համար . շատ անդամներ ինքը անձամբ վիէննաի զինագործարանները այցելելով կը գնէր լաւ տեսակներէն հրացան , ըէվօլվէր ևն . և Տաճկաց գէմ պատերազմով Պուլզար ապատամբներու կը բաժնէր : Պուլզարիոյ մէջ տեղի ունեցած հարստահարութեանց , մարդաբանաւթեանց տեղեկագիրներ ևս , օտար տէրութեանց տեղական դես-

պաններէն և ծիւպատոսներէն վկայուելով , Քարավէլօֆ ինքը անձամբ կը տանէր Ռուսիոյ Ալեքսանդր Բ կայսեր և ողբալով կը ինդրէր իւր աղգին համար ազատութիւն և կամբարենորսդում : Կայսրը ամեն անդամ կը խոստանար Պուլզարաց փրկութիւնը և կը սէր . Ես առիթ կը փնտուեմ այդ բարբարսոսաց գլուխը ջախջախելու . մի վհատիք գուք երբէք և շարունակեցէք ձեր արշաւանքը և ապրուտամբութիւննը . զօրաւոր գաղտնի ընկերութիւններ կազմեցէք . այդ անհաւատները ինչ որ կընեն ձեզ , նոյնը ըրբէք գուք ալ նոցա . հոգ չէ , թող թափի ձեր անմեղ տրիւնը . առանց արեան ո՞ր աղգը կարող եղած է Ազատութիւն գտնել . ձեր աշացը առջեւ են Մերպերը , Ռոմանները և Մօնթէնէկրօն որոնք այսօր գրեթէ ունին ազատ կառավարութիւններ և աւելի արմատանալու համար դարձ-

եալ կը մաքառին այդ թուրքերու գէմ. դուք եւս պիտի լինիք օր մը մի ազատ և Սահմանադրական ազգ և այդ ազատութիւնն ալ դարձեալ իմ ձեռօքս պիտի լինի . . . համբերութիւն . դեռ ժամանակ պէտք է : Լիւպին Քարավէլօֆ իւր անձնական շահերը մէկդի թողլով, մի միայն հայրենեաց ազատութեամնը համար 17 տարի շարունակ աշխատած է և վերջապէս իւր ազգին փրկութեամնը ականատես եղաւ :

Լիւպին Քարավէլօֆ մեռաւ յամին 1879 փետր. 29ին ի Բուսճուք, թողլով իւր քարեգործութեանց յիշատակները . ինչպէս որ իւր ազգն ալ կը յարգէ նորա յիշատակը և ամեն տարի փառաւոր հանդէս կը կատարուի իւր դամբանին վրայ, որտաճը լիկ ատենաբանութիւններով :

9.

ՖԻԼԻԲԻ ԹԱՅԹԻՒ

Ծնաւ 1833 տարւոյն սկիզբները . անոր ծննդավայրը ես անձամբ իրեն հարցուցած եմ ստոյդ տեղեկութիւն մը առնելու համար, բայց ուր աշխարհ գալը ինքն ալ չգիտեր . կարծեմ թէ կըսէ իսլիմիա ծնած լինելու եմ, բայց հաստատ չէ : Ֆիլիբ հազիւ քսան և հինգ տարեկան էր, էսկի Զազարայի ըլթաքներու դէմ . կը կուտէր Պուղարները հարստահարենուն համար : Օր մը աւազակաց մի քանիներն խորհրդակցելով կորուն որ այս վտանգաւոր անձը սպաննեն : Ֆիլիբ իւր բարեկամներէն կը տեղեկանայ իրեն համար տրուած վճիռը և նոյն գիշերը կը յաջողի աւազակապետ Տէլի Եուսուֆը սպաննելով խոյս

տալ Սթարա Բլանինա : Երեք տարի  
շրջագայելով շատ կոտորած կուտայ  
Տաճկաց . յետոյ առաջին անգամ 1862ին  
3-4 հարիւր Պուլղար կամաւորաց գը-  
լուխն անցնելով Թրնօվախ անտառին  
մէջ ապստամբութիւն կը յարուցանէ :  
Այս անձը շատ կոտորած կուտայ Տաճ-  
կաց . մի քանի Տաճիկ գիւղեր հրոյ  
ճարակ կընէ , նոցա մզկիթները կը  
քանդէ . երբ կիմանայ որ Ռուսակու-  
քէն Միտհատ փաշայի հրամանատա-  
րութեամբ մի քանի բանակ Օսման-  
եան զօրք թնդանօթներով իւր վրայ  
պիտի յարձակին , ինքն այնչափ հո-  
գիով անկարող լինելով գիմադրել ,  
անմիջապէս խոյս կուտայ ի Սերպիա ,  
Ֆիլիք դարձեալ 1867 մայիս ամսոյ  
14ին ապստամբելով Պէլա գիւղաքա-  
ղաքին մօտ Պէյ Վլուպօվքա ըստած  
տեղը սոսկալի ճակատամարտ մը կու-  
տայ . այս անգամ ալ երեք օր շա-  
րունակ կը պատերազմի և դարձեալ

խոյս կուտայ Սերպիոյ սահմանագըլ-  
խոյն մօտ Սվէթի նիքօլա Պալքանի  
մէջ . այսպէս մինչեւ 1877-78 պա-  
տերազմած է քաջաբար : Երբ իւր  
կենսագրութեանը վրայ տեղեկութիւն  
կառնեի , ցոյց տուաւ մարմնոյն վրայ  
ունեցած 5 գնտակի վէրքերը , բո-  
լորովին բժշկուած , այնպէս որ միայն  
գնտակը մոտած և ելած տեղերը  
յայտնի կերեւին : Աա վերջին ուսւսօ-  
թրքական պատերազմին տաենն ալ  
մեծ քաջագործութիւններ գործած  
է Շիքքա Պալքանի մէջ . իւր կուրծքը  
լի է այլ և այլ տերութեանց շքա-  
նշաններով :

Ինչպէս որ ամեն ապստամբա-  
պետներ ունեին մէկ մէկ դրօշակ ,  
ֆիլիք եւս ունէր և երբէք չէր թո-  
գուր իւր ձեռքէն : Մեր ազնիւ ըն-  
թերցոններ կուղեն անշուշտ գիտնալ  
պուլկար ասպատակ հայրենասէր  
խումբերու դրօշակին ինչ ձեւ լինելը .

ահաւասիկ . . . 1½ մէթը երկայն և  
մէկ մէթը լայն , վերը ճերմակ , մէջ-  
տեղը կանոչ և վարի կողմը կարմիր ,  
մեռաքսէ լախ մը . ճիշդ գրօշակին  
մէջ տեղը պուլզար օրիորդաց ձե-  
ռամբ ոսկի թելերով բանուած մի  
առիւծ երկու ոտքի վրայ կանդնած  
և ձեռքերը վեր բարձրացուցած ,  
կարծես իւր ահոելի ճանկերովը կու-  
ղէ յափշտակել թշնամին , գլուխը  
թագաւորական թագ և առիւծին  
ոտիցը ներքեւ կը տեսնուէր տաճկա-  
կան կէս լուսինը . գրօշակին վերի  
կողմը գարձեալ ոսկի թելերով և  
պուլզարերէն լեզուով գրուած էր .  
«Ալօպօտա իլի Սմըթ» (Աղատու-  
թիւն և կամ Մահ ) :

Ֆիլիք Թօթիւ մինչեւ ցայսօր ողջ  
է և կը բնակի Ռուսուքէ նժամ հե-  
ռի Օսթրիցա անուն գիւղին մէջ . նա  
երկայնահասակ , կարմիր այտերով ,  
անմորուս , յաղթանդամ , առողջ մարդ-

մ'է . ի վարձատրութիւն իւր ծառա-  
յութեանց ամսական 200 ֆրանգ  
հանգստեան թոշակ կընդունի կա-  
ռավարութեան գանձէն : Արդեօք  
որչա՞փ զուարճալի կը լինի երբ ազա-  
տասէր անձ մը կընթեռնու Ֆիլիք  
վյօվօտայի կենսագրութիւնը :

10.

### ԲԱՆԱՅՈՒԹ ԽԻԹՈՅ

Ծնաւ 1849 ապրիլ 27ին , Պուլ-  
զարիոյ էլէնա քաղաքին մէջ : Բա-  
նայօթ հազիւ 25-26 տարեկան էր  
երբ երեկոյ մը արեւը մարը մտնելու  
ատեն կը տեսնէ որ գրացւոյն տունը  
երկու խայտառակ թօւրքեր կը մրտ-  
նեն Պուլզար կնոջ մը պատիւը բըռ-  
նաբարելու : Բանայօթ կնոջ աղերսա-  
նաց չդիմանալով առիւծի նման կը  
մտնէ գրացւոյն տունը և ձեռացը մէջ  
ունեցած կացինի հարուածներով կը

սպաննէ երկու անպատիւ Թուրքերը  
և նոյն գիշերը առանց ձերբակալ-  
ուելու կը յաջողի փախչիլ ի Սերպիա :  
Մի քանի ամիս յետոյ աղատասէր  
Պուլղարներէ մի ասպատակ խումբ  
կազմելով Սթարա Բլանինաի ճանա-  
պարհի անցքերը կը բռնէ և մեծա-  
մեծ չարիքներ կը հասցունէ Տաճկաց  
դիմուն . ուր որ կը պատահէր Զէր-  
քէզի , չարաչար կը սպաննէր զնա :  
Բանայօթ եւս մինչեւ 1877-78 Տաճ-  
կաց գէմ պատերազմած է :

Բանայօթ Խիթօֆ ողջ է մինչեւ  
այսօր . իւր քնտկումիւնը հաստա-  
տած է Ռուսական մէջ . կառավա-  
րութեան գանձէն 200 ֆրանգ հան-  
գոտեան թոշակ կընդունի ամէն ա-  
միս :

41.

ԿէօՐԿԻ ՊէՆՔՕՎՈՒՔԻ  
(Երբեմն ԿԱՎՐԻԼ ԽԸԼԸԹՕՖ անուանեալ)

Ծնաւ 1846ին մայիս ամառ սկիզբ-  
ները , Սրեւելեան Բումէլիի Քօրրի-  
վշտիցա գիւղաքաղաքին մէջ . ՊէՆ-  
Քօվսքի երկայնահասակ , նիհար կաղ-  
մով , խարսիշագոյն մազերով , եր-  
կայն և բարակ պեխերով և կապոյտ  
աչերով մի անձ էր : Սրեւելեան Բու-  
մէլիի Պուլղարաց մէջ մեծամեծ յե-  
ղափոխական ընկերութիւններ կազ-  
մեց նա . զարմանալի վարպետու-  
թեամբ Տաճկաստանէն , Ռումանիաէն  
և Սերպիաէն բաւական զէնք և հը-  
րանիւթ բերելով , Քօրրիվշտիցաի և  
Բանակիւրիթի (Օթլուք քէօյիւ) ե-  
կեղեցեաց մէջ կը պահէր , օր մը Տաճ-  
կաց գէմ յեղափոխութիւն յարուցա-

Նելու համար : Տաս հազար պուլզար  
կամաւորներու համար հետեւեալ  
գործիքները մտակարարեց Պէն-  
քօլսքի . իւրաքանչիւր անձնուրաց  
անպատճառ պէտք էր որ ունենար  
ասոնք իրեն հետ :

1 հրացան , 1 բէվոլվէր և կամ  
ատրճանակ , 1 դանակ կամ դաշոյն  
և կամ սուր , 300 գնոտակ (cartouche)  
հրացանի , 150 գնոտակ բէվոլվէրի ,  
երկու կաշիէ շինուած պահարաններ  
գնոտակներու համար , 2 հօխա պաք-  
սիմաթ , 50 տրամ մեղրամոմ (անօ-  
թութեան դիմանալու համար . 50  
տրամ մեղրամոմով մարդ ամիս մը  
կրնայ ապրիլ ) , 1 թիթեղեայ ջրա-  
ման , 2 ձեռք ճերմակեղէն , 1 անձ-  
րեւարգել վերարկու (եազմուրլըք) ,  
3 հատ վիրակապ (bandage) 8-10  
մէթր երկայնութեամբ , 25 կրամ  
perchlorure de fer liquide վէրքէ վա-  
զած արիւնը կարելու համար , 10

կրամ sulfate de quinine (սօլֆաթօ) ,  
2 զոյդ տրեխ , 3-4 կտոր կապար  
(մարդ բերանը կտոր մը կապար առ-  
նելով կրնայ իւր ծարաւութիւնը ան-  
ցունել ) , 100 տրամ charpie (թիթ-  
թիք) , ասեղ և գերձան : Եատ ա-  
պատամբապետներ ալ strychnine ա-  
նուն սոսկալի թոյնը իրենց վրայ կը  
պահէին . երբ Թուրքերը ձերբակա-  
լելով կը բանտարկէին իրենցմէ մէկը ,  
նա անմիջապէս սրբիքնինը ուտելով  
կը մեռնէր որպէս զի զինքը ողջ կա-  
խազան չի հանէին :

1865 տարւոյ մայիս ամսոյ սկիզբ-  
ները Արեւելեան Բումէլիի Տէրքէնա ,  
Բանակիւրիշթէ և Քօթէլ քաղաքաց  
բնակիչները Պէնքօլսքի հրամանաւ  
ապատամբեցան . յարձակումն սկսաւ .  
Բանակիւրիշթէի շրջակայ գիւղերու-  
Տաճիկ բնակիչներն գրեթէ բոլորն ալ  
ջարդուեցան . Պէնքօլսքի խումբը  
որէ կանցունէր անխնայ մէկէն մինչեւ

100 տարեկան թարգերն . Պուլղարք ունէին նաեւ մի քանի հատ թնդա-  
նօթ կեռասենիէ շինուած , որոց մէջ  
երկաթի կտորներ լեցունելով կար-  
ձակէին Տաճկաց վրայ : Յարձակումն  
շարունակեց երեք օր . յետոյ 25 հա-  
զարի չափ Օսմաննեան կանոնաւոր զօ-  
րաց բանակներն հասնելով սկսան  
ջարդել Պուլղարները . բայց այս լու-  
րը հեռագրաւ Ռուսիոյ կայսեր ա-  
կանջը հասնելով , անմիջապէս Տաճ-  
կաց յարձակումն դադրեցաւ : Պուլ-  
ղարք որչափ մահմետական ջարդած  
էին , կրկնապատճիկը ջարդուեցան ի-  
րենք ալ . և անշուշտ պէտք էր որ  
ալ եւս Տաճկաց դէմ չկուռէին Պուլ-  
ղարք , բայց նոքա լնդհակառակը  
այն օրէն յետոյ եւս առաւել սաստ-  
կացուցին իրենց արշաւանքը , յեղա-  
փոխական ընկերութիւններն աւելի  
եւս բազմացան . մինչեւ իսկ ամուս-  
նացեալ անձինք իրենց գործերը , կին

և զաւակները թողլով խոյս տուին  
Պալքաններու մէջ և սկսան անդա-  
դար պատերազմիլ Տաճկաց դէմ :  
Պէնքովմքի արդէն ձերբակալուած էր.  
Ֆիլիպէի բանտին մէջ մեռաւ երեք  
տարի յետոյ , 1868 թուականին :

12.

ՄիԽԱՅԻԼ ԵԽ ՍԹՈՅԱՆ ԺԷՔԻՅՅ Եղ-  
բարք . Ծնեալք ի Թրնօվլա :

ԹՕՅՈՐ Լ. ԳԱՊԼԻՇՔՅՈՅ. Ծնեալ ի  
Քլիսուբա :

ԹՈՒՅՔՅՈ ԵԽ ՈՒԶԱԿ. Ծնեալ ի Քա-  
լօֆէր :

Պուլղարաց պատմութենէն քա-  
ղելով վերոյիշեալ հինգ հայրենասէր-  
ներու միայն անուններն և իրենց ծը-  
նընդավագյրը կը նշանակեմք հոս . իսկ  
նոցա ծննդեան թուականի վրայ ըս-  
տոյդ տեղեկութիւններ չի գտնելուս

Համար չեմ նշանակած : Առքա ալ  
հայրենեաց փրկութեան համար տա-  
րիներով Պալքաններու մէջ ապա-  
տանած և հուսկ յետոյ նահատակ-  
ուած են Օսմանլիներու հրացանի հար-  
ուածներէն :

43.

ԻԼԻՍ. Վ.0ՅՎ.08Ա. Եւ կամ ՏԵՏՈ ԻԼԻՍ. (1)

Ծնաւ 1825 փետր. 16ին Պուլզա-  
րիոյ Քէօսթէնտիլ քաղաքին մէջ :  
1858էն մինչեւ 1877-78, այսինքն 20  
տարիներ, անդագար Տաճկաց գէմ  
պատերազմած է : Տէտօ իլիս միջին  
հասակով, գէր, սպիտակ երկայն  
պեխերով, անմորուս, զուարճախօս  
մի անձ է : 1885ին սերպօ-պուլզա-  
րական պատերազմի ատեն Սօֆիս կը  
գտնուէի պաշտօնով . անդ օր մը բը-

(1) «Տէտօ» ծերունի կը նշանակէ  
պուլզարերէն լեզուով :

նական բաղնիքի մէջ զինքը տեսնե-  
լու բարեբաղդութիւնն ունեցայ :  
Թող անհաւատալի չժուի ազնիւ ըն-  
թերցողաց երբ պիտի ըսեմ թէ իւր  
մարմնոյն վրայ քսանէ աւելի հրա-  
ցանի և գանակի վիրաց նշաններ ու-  
նի այս քաջը . իմ՝ հետաքրքիր լինելու  
հասկնալով, ինքն ալ ցոյց տուաւ ինձ  
կուրծքին աջ կողմը և կանակը ուր  
կը գտնուէին երեք հատ գնատակ .  
հարցուցի թէ ինչո՞ւ վիրաբուժական  
գործողութիւն ընել տալով չհաներ  
այդ գնտակները . ինքն ալ պատառ  
խանեց թէ երբէք ցաւ մը չեմ զգար  
և արգէն ուխտած եմ որ մինչեւ վեր-  
ջին վայրկեանս անբաժանելի ընկեր  
լինին ինձ այս գնտակները, և երբ  
ձեզ նման հետաքրքիր անձինք տե-  
ղեկութիւն կը խնդրեն, խսկայն կը  
յիշեմ այն օրերը որ այս գնտակները  
մարմնոյս մէջ մտան և այսօր ալ սիւ-

րելի ազգիս առջեւ ճշմարիտ հայ-  
րենասէր մ'ըլլալս կապացուցանեն :  
Յետոյ ելանք բաղանիքէն և հիանա-  
լով բաժնուեցայ իրմէ :

1876ին տեղի ունեցած սերպո-  
թրքական պատերազմի ատեն Իլիա  
վոյզոտա 2000 կամաւոր պուլարաց  
գլուխը անցնելով Զայչարի կողմերը  
կը պատերազմէր և դարձեալ վերջին  
ռուսօ-թրքական պատերազմի ատեն  
ալ քաջարար կուռւած է Շիրքաի մէջ  
ընդդէմ Օսմաննեան զօրաց : Իլիա վոյ-  
զոտա դեռ ողջ է մինչեւ այսօր և  
կը բնակի երբեմն իւր ծննդավայրը  
ի Քէօսթէնտիլ և երբեմն ալ ի Սօ-  
ֆիա . ունի զաւակներ սրբնք կառա-  
վարութեան պաշտօնեայներ են : Այս  
հայրենասէր ապստամբապեան ալ  
կընդունի հանդստեան թոշակ կա-  
ռավարութեան գանձէն ամսական  
250 ֆրանգ :

14.

### ՀԱՅԻ ՏԻՄԻԹՐ ԱՌԵՆՈՑ

ԵԿ

#### ՍԹԵՖԱՆ ԳԱՐԱՅԱ

Առաջինը ծնաւ Արեւելեան Բու-  
մէլիի Սլիվնէ քաղաքին մէջ 1842ին .  
իսկ վերջինը Տոպրուճափ Թուլչա քա-  
ղաքին մէջ 1838 թուականին :

Այս երկու ահեղ առիւծները Պու-  
թէշիթ զիրար ճանաչելէ յետոյ ուխ-  
տեցին անբաժանելի եղբայր ըլլալ և  
մինչեւ իրենց կենացը վերջին շունչը  
Պուլզարիայ փրկութեան համար Տաճ-  
կաց գէմ պատերազմիլ : 1865 թուա-  
կանէն սկսան առաջին անգամ Ռուս-  
նիաէն Պուլզարիա անցնելով ապրո-  
տամբիլ . սոքա տմենայն քաջութեամբ  
կը կռուէին . մէկ խօսքով , կ'սպան-  
նուէին և կ'սպաննէին և դարձեալ

խոյս կուտային Ռումանիա և կամ Սերպիա : 1868 յուլիսի վեցերորդ օրը Հաճի Տիմիթը և Սթէֆան Գարանա 280 արբանեակներով Գանուրի վրայ երթեւեկող աւատրիական ընկերութեան Germania անուն շոգենաւը յաջողեցան մեծ ճարտարութեամբ ձեռք անցունել : Նուապեան սոցադիմագրելու անկարող ըլլալով, անմիջապէս «Կէրմանիա »ն կը յանձնէ երկու հայրենասէր վօյզօտաներուն և սոքա Գանուրի տիանց վրայ Ռազ հօվա քաղաքի մօտ Սաւըեար կոչուած տեղը կելնեն : Իրենց նպատակն էր միանեալ Պալքանի Պուլզարաց հետ և այսպէս մեծ ջարդ մը տալ Տաճկաց . Եիրքաի և Սթարա Բլանինաի անցքերը բռնելով պիտի կարենային գիմագրել հազարաւոր զօրաց : Բայց գիմագրաբար Հաճի Տիմիթը անկարով եղաւ իւր նպատակին համել . քանզի Եիրքաի Պալքանը 36 ժամ հե-

ուառութիւն ունի Գանուրի եղեր : Քէն : Հաճի Տիմիթըի խումբը մինչեւ Լոֆչա քաղաքի մօտ Գաւայուէն առուն գիւղի անտառը կարող եղաւ երթալու . և անկից Բուշիտ պէյ ըստած տեղը երբ ժամանեցին , այնտեղ գիմաւորեցին իրենց չորս վաշտ Օսմանեան զօրքեր և սկսու ճակատամարտը : Այս պատերազմը երկու օր տեւեց , գիշեր և ցերեկ . Երբորդ օրը Սթէֆան Գարանան մի քանի հըրացանի հարուածէ վիրաւորուելով , յաջողեցան Թուրքերը բռնել զինք և անսի ուղարկեցին ի Բուսճուք : Խոկ Հաճի Տիմիթը՝ Գարանայի ձերբակալուելէն յետոյ յաջողեցաւ իւր 30 իշափ արբանեակներով խոյս տալ ի Սթարա Բլանինա : Մի քանի օր վերջը Բուսճուքի կուսակալ Միահաթ փաշայի և Գանուրի զօրաց ընդհանուր հրամանատար Սազիքթ փաշայի ներկայութեամբ սկսու Գարանայի գա-

տը . երեք օր վերջը մահուան վճիռ  
տրուեցաւ Գարաճայի և իւր երեք  
ընկերներուն որոնք պատերազմի գաշ-  
տը գերի ընկած էին Տաճկաց ձեռ-  
քը : Սոյա և ոչ մին իւր երդումն ուշ-  
նակոխ ըրաւ և չխստովանեցան ճշշ-  
մարտութիւնը : Միտհաթ փաշա շատ  
հետաքրքիր եղաւ Գարաճայի գաղտ-  
նիքը իմանալու , բայց անկարսղ եղաւ .  
Երբ Սթէֆան իւր մարմնոյն վէրքե-  
րէն կը տանջուէր , Միտհաթ կը զրկէ  
Ռուսճուքցի Բօր Խրիսթօ անուն քա-  
հանայն որ վիրաւորեալ ապստամբա-  
պետին խստովանանք ընէ . Գարա-  
ճայի գտնուած սենեկին դուրսը մի  
քանի Թուրք պաշտօնեայներ գաղտ-  
նապէս կը կենան ձեռքերնին ունե-  
նալով թուղթ և գրիչ , որպէս զի  
քահանային հաղորդուած գաղտնիքը  
անմիջապէս գրի առնուն : Բայց Գա-  
րաճան կը հասկնայ թէ քահանայն  
ինչ բանի համար զրկուած է իր մօտ .

Երբ քրիստոնեայ բանտարկեալ մը կը  
կը փափաքի իւր մօտ քահանայ մ'ու-  
նենալ խոստովանելու և կամ հաղորդ-  
ուելու համար , գրեթէ ամեն ատեն  
կը մերժուի Տաճկաց կողմանէ . ահա  
այս պատճառաւ հասկցաւ Գարաճա  
և երբ քահանայն գաղտնիք կըհար-  
ցընէր իրեն , սկսաւ հետեւեալ կեր-  
պիւ պատասխանել Սթէֆան , խօսե-  
լու անկարսղ վիճակի մէջ . Ով հայր,  
գու եկար ոչ թէ քու հոգեւոր պարտ-  
քըդ կատարելու , այլ ինձմէ լսած-  
ներդ մի առ մի այն քրիստոնէից  
թշնամի ժանա Միտհաթին հաղորդե-  
լու . պէտք է գիտնաս որ իմ գաղտ-  
նիքս իմ մարմնոյս հետ միատեղ հո-  
գին մէջ պիտի ամփոփուի . այն , Սթէ-  
ֆան Գարաճա իւր ահաւոր երդումը  
ոտնակոխ չըրաւ և գաղտնապահու-  
թեան գէմ չգործեց մինչեւ հիմա և  
ասկից յետոյ ալ չգործեր . շուտ գը-  
նա գու մահուանս լուբը սիրելի ազ-

գիս հաղորդելու . մի քանի ժամէ  
յետոյ թող գան իմ ցուրտ և արիւ .  
նախաթաւ գիտիս վերջին անգամ  
տեսնելու . գնա՛, իմաց տուր կըսեմ  
որ բոլոր եկեղեցեաց տխուր զանգակ-  
ները հնչուին մահուանս լուրը բոլոր  
քաղաքին մէջ տարածելու համար :  
Ո՞վ հայր հոգեւոր , շատ եղջանիկ եմ  
որ հայրենեացս աղատութեան հա-  
մար կը մեռնիմ . արգէն իմ ոուրս  
առաւ իւր վրէժը այդ վայրենի և  
բորբարոս աղգէն և իմ վրէժս ալ  
պիտի առնու իմ հոգեւոր եղբայրս  
Հաճի Տիմիթը . նու ոզջ է գեռ և  
Պալքանի մէջ կը պատերազմի վասն  
հայրենեաց . ա՛հ , Հայրենիք , ա՛հ ,  
Աղատութիւն . եթէ ես ականտեսո  
չեղայ քու փառացդ , իցիւ թէ քիչ  
առենէն թող սիրելի ազգս լինի : Ա-  
հա միայն այսչափ եղան իւր վերջին  
խօսքերը և յանկարծ գլուխը ծռե-  
լով ինկու . ծանր շղթաներուն վրայ

անշարժ : Քահանայն հեռացաւ քո-  
վէն կարծելով թէ մեռաւ նա , և  
գնաց պատմեց իւր ազգին ինչ որ տե-  
ղի ունեցաւ : Մի քանի ժամ յետոյ  
աւելի եւս կը ծանրանայ վիրաւորեա-  
լին վիճակը և կէս գիշերը երկու ժամ  
անցած կը մեռնի անոք և անմիխ-  
թար բանախն մէջ , 1868 յուլիս 23ին ,  
ի Բուսնձուգ : Հետեւեալ առաւօտ իւր  
սառած դիտիլ կախազան կը բարձ-  
րացնեն Թուրքերը ի տես ժօղովրդեան  
և յետոյ կը յանձննեն քահանային :

Գալով Հաճի Տիմիթըի , նու ալ  
մի քանի օր յետոյ Թրքաց գէմ պա-  
տերազմոծ տտեն մարմնոյն մի քանի  
տեղերէն վիրաւորուելով կը մեռնի և  
Թուրքեր նորա գլուխը մարմնէն զա-  
տելով կը բերեն ի Թիրովա : Նոյս որ  
այսպէս նահատակութեան արժանա-  
ցան , զաւակոցն ու ընտանեացը մէկ  
մէկ ամառթոշակ սահմանուած է այ-  
սօր կառավարութեան գանձէն :

ՎԱՍԻԼ ԼԵՎՈՅԻ (1) ՏԻԱԳՈՆ (Սարկանագ)

Ծնաւ 1837ի մարտ ամսոյն վերջերը, Սրեւելեան Բումէլիի Քառլօվաքաղաքին մէջ։ Խւր ուսումն առածէ տեղւոյն ազդային վարժարանին մէջ։ Վասիլ Հաղիւ 20 տարեկան էր, խւր մօրեղբայրը Հաճի Վասիլ արխիմանտրիս (վարդապետ) բռնի սարկաւուգութեան աստիճան տուաւ նորա, անունը Իլինաթ կոչելով։ Երկու տարի շարունակ այն պաշտօնը վարեց։

(1) Լ. Կ. Վ. Ք. (առիւծ) անունը առածէ վասն զի երբ օր մը Տաճկաց կողմանէ պիտի ձերբակալուէր, երկու մէթը բարձրութեամբ գետնէն վեր պատի մը վրայէն առիւծի մը պէս ցատկելով թշնամեաց ձեռքէն ազատած է։ ականատեսք հիանալով Առիւծ մականունը տուած են նորա։

Ծ. թ.

յետոյ օր մը իւր հոգեւոր հօր կըսէ։ Հայր իմ, բնութեանս դէմ է ամեն օր գիւղէ գիւղ շրջելով մուրալ։ այս վայրկենիս կիմացունեմ ձեր Գերապատուութեան թէ ես կը փափաքիմ ճակտիս քրտամբը հայթայթել օրապահիկս։ գուք զիս ամեն օր կը զրկէք գիւղերը գրամ հաւաքելու։ Ինչ իւրաւամբ ես երթամ այն խեղճ և աղքատ գիւղացւոցմէ ստակ պահանջեմ առանց փոխարքէն բան մը տալու։ ասի բացարձակ հարստահարութիւն մ'է օր ես կը գործեմ և կամ յանդուգն մուրացիանութիւն։ արդէն գոհ չեմ վիճակիէս։ այս արհեստը այս վիճակի մէջ անպատուութիւն կը բերէ ինձ։ կը փափաքիմ օր լաւ ապագայ ունենամ։ ահաւասիկ վերջին որշումս այս է օր կը հաղորդեմ ձեղ։ Հիմա կը մնայ օր երկայն մազերս կտրեմ և ծնոտս ածիլեմ։ անունս դարձեալ Վասիլ է։ Իլինաթ անունը

ուրիշի մը տուէք , ձեր կոչումը չկոր-  
սուելու համար : Երբ Հաճի Վասիլ  
կը լոէ Լէվոքիի խօսքերը , իսկոյն կը  
համենայ որ հայրենասիրութեան հը-  
րով վառեալէնա . երկու օր շարունակ  
կը խրատէ իւր քեռորդին , զիտաւո-  
րութենէն յետ կեցնելու համար , բայց  
անկարող կրլլայ համոզելու : Լէվոքի  
Զատկի մը երկրորդ օրը գեղեցիկ և  
երկայն մազերը կը կարէ և մօրուքը  
կածիլէ . հետեւեալ առաւօտուն Հա-  
ճի Վասիլի ձին կը հեծնէ և կը փախ-  
չի ի Սերպիա . անդ կը տեսնուի Սա-  
վա Ռաքօվոքիի հետ և նորա առա-  
ջարկութեամբ կը մտնէ զինուորական  
բանակի մը մէջ : Տարի մը յետոյ Ռա-  
քօվոքի սորտ կը յանձնէ Պուլզարիոյ  
ընդհանուր գաղտնի գործակատա-  
րութեան պաշտօնը : Լէվոքի կը սկսի  
շըագայիլ Պուլզարիոյ մէջ զիւդէ գիւղ  
և քաղաքէ քաղաք : Լէվոքի իւր  
պաշտօնը ամենայն յաջորդութեակը և

զարմանալի ճարտարութեամբ կը կա-  
տարէ . Պալքանի Պուլզար ժողովրդ-  
եան երիտասարդները համոզելով  
երդու ընցնելէ յետոյ , իւրաքանչիւրի  
անունը , մականունը և ծննդավայրը  
իւր փոքրիկ տետրին մէջ կարձանաւ-  
գրէ և Պուքրէշմի և Պէլկրատի Յե-  
ղափոխական ժողովոց Նախագահին  
կը դրկէր . վերոյիշեալ երկու ազգա-  
երկիրներէն մեծ քանակութեամբ զէնք  
սահմանագլուխներէն փախցնելով Պալ-  
քանի շըագայ գիւղացւոց իւր ձե-  
ռամբը կը բաժնէր ձրիապէս . Թըր-  
քաց և Զէրքէղաց Պուլզարներու գէմ  
գործած հարստահարութիւններն և  
մարդասպանութիւններն և նոցա ան-  
տանելի թշուառութիւնները զատ  
զատ տեղեկագրելով իւրաքանչիւր  
քաղաքաց երեւելի հայրենասէր Պուլ-  
զարներէ և բարձրաստիճան կրծնա-  
ւորներէ վաւերացնելով իւր յատուէ  
գաղտնի թզմատարի միջոցով կաւ-

զարկէր ժողովոյ նախագահին որուն  
միջոցով ալ օտար քրիստոնեայ տէ-  
րութեանց նախարարական գիւան-  
ներուն զրկուելով գթութիւն կըհայ-  
ցէին : Լէվոքի երբ իւր կրօնական  
պաշտօնը թողաւց , յեղափոխական  
եղաւ . ուրիշ մի քանի սարկաւագներ  
նորա նախատական դրեր ուղղեցին .  
իսկոյն նա երկու անձնութաց անձինք  
առաւ իւր հետ և երկու երի-  
տասարդ սարկաւագները սպաննե-  
լով վրէժը տռաւ : Օր մը Պէլկուատի  
մէջ Սերպիոյ իշխան Միքոյէլ Օպրէ-  
նովիչ կըհարցնէ Ռոքօվոքիի թէ ի՞նչ  
նպատակաւ զինուորական ծառայու-  
թիւն կընեն Պուլզարք Սերպիոյ մէջ .  
Ռոքօվոքի կը պատասխանէ թէ Պուլ-  
զարները զատ կաւալարութիւն չու-  
նենալուն պատճառաւ կը փափաքիմք  
որ քրիստոնէից ծառայեմք : Նոյն մի-  
ջոցին որ Լէվոքի ալ ներկայ կը գլու-  
նուէր անդ , անմիջապէս գըպանէն

րէվօլվէրը հանելով մի հարուած կու-  
տայ Ռաքօվոքիի որուն գնտակը մի-  
այն աջ ականջին դպչելով կանցնի .  
յետոյ իշխանը կը հարցնէ Լէվոքիի  
թէ ինչո՞ւ զարկաւ . սա ալ կը պա-  
տասխանէ թէ Ռաքօվոքի ձեր հարց-  
ման բուն պատասխանը չէ տռաւծ .  
եթէ Պուլզարները Սերպիոյոց բա-  
նակներուն մէջ կը ծառայեն , սոցա  
նպատակը հայրենիք վերագառնալով  
Տաճկաց գէմ պատերազմիլ է . ինչո՞ւ  
Ռաքօվոքի սիալ տեղեկութիւն ար-  
ւաւ Զեր Բարձրութեան : Յետոյ Ռա-  
քօվոքի շուտ հաշտուեցաւ Լէվոքիի  
հետ , զարմանալով նորա անվեհեր և  
անկեղծ հայրենասիրութեան վրայ :

Լէվոքի կը շրջադայէր Պուլզարիոյ  
մէջ , գրեթէ ամեն անգամ ձիով . իւր  
ճամբորդութեանը մէջ կը հանդիպէլ  
Զէրքէղաց և զապթիլէներու . շատ  
անգամ անոնց հետ լնկերանալով մի-  
ատեղ կը ճաշէր , կը խօսակցէր և

գարձեալ անվտանգ կը բաժնուէր աշնոցմէ : Յեղափոխական ընկերութեան գրամագլխով՝ Պալքանի ճամբաներուն վրայ պանդոկներ շինուած էին ուր կը միանային Գործադիր պաշտօնեայք Լէվոքիի հետ խորհրդակցելու համար . այդ պանդոկներու մէջ ծառայող անձինք ալ մէկ մէկ անձնուրաց հայրենասէրներ էին . այս, այդ պանդոկները տւելի լաւ կը նպաստէին Լէվոքիի քան թէ անծանօթ ճամբարդներու : Վասիլ Լէվոքի կը խօսէր արեւելեան բոլոր լեզուները, այսինքն թուրքերէն, պաւլլարերէն, գալլիերէն, գերմաներէն, յունարէն, ռումաներէն և սերպերէն : Միշտ գիշեր տաեն կը ճամբարդէր նա, երբեմն թուրքի հագուստով և երբեմն գիշեցացի . շատ անդամներ ալ ինքունք Ռուման և Սերպ կը ներկայացունէր, և յիշաւի ալ ունէր իր գրպանի մէջ երկու տէրութեանց անցագրերն :

Իւր եօթը տարուան աշխատութեան շըջանին մէջ, 6,000էն աւելի զէնք Պուլզարիա փոխագրելով բաժնտծ է աշղատասիրաց : Այլ սակայն սա ցաւալի կէտն ալ պարաք կը համարիմ յիշել թէ մատնութիւնն ալ չուշտնար ամեն գործի մէջ իւր գերը խաղալ : Լէվոքիի այնչափ տարուան ծառայութեանը փոխարէն ընդունած վարձատրութիւնն եղած են Մատնութիւն և Մահ, որոց առթով մի քանի տող վերջը պիտի խօսիմ իւր մահուանը պատճառ եղող սեւհոգի Պուլզար կը րօնաւորին վրայ որ չարաշար մատնելով վնար Տաճկաց ձեռքը յանձնած է : Լօֆչա քաղաքի բնակիչներէն Բօր Քրիսթօ անուն քահանայի պաշտօնն էր յանուն Պուլզարիոյ փրկութեան հանգանակեալ գրամմերն իւր մօտ պահել և պէտք եղած տաեն յանձնել Լէվոքիի :

Այս գանձապետութեան պաշտօնը  
Լէվոքիի կողմանէ տրուած էր իրեն :  
0ր մը Բօր Քրիսթօ նամակ մը կըն-  
դունի Լէվոքիի ստորագրութեամբ  
որ կը ծանուցանէր թէ հինգ հազար  
զրուշ նամակաբեր Գարակէօջօֆի  
յանձնէ զէնք ծախու առնելու հա-  
մար : Քահանայն կը յանձնէ որոշեալ  
գրամը այդ անձին . յետոյ պէտք չե-  
զած գործի մը վրայ Բօր Քրիսթօ նա-  
մակ մը կը գրէ Լէվոքիի ընկերներէն  
Տիմիթր Օղջթիի և զէնք գնելու հա-  
մար Գարակէօջօֆի Յ հազար զրուշ  
յանձնած լինելն ալ բացարձակ կը  
գրէ : Այս նամակը գժբաղդաբար  
Տաճկաց ձեռքը կանցնի և անմիջա-  
պէս կառավարութիւնը Բօր Քրիսթօն  
ձերբակալելով կը բանտարկէ իրբեւ  
«Քօմիթա պաշը» : Քանի մը օրէն յե-  
տոյ կը սկսի հարցաքննութիւնը . Բօր  
Քրիսթօ առաջին անգամ կուբանայ  
իր գրածն . վերջապէս մահուան կը

գառապարտեն զինքը : Քահանայն կը  
սկսի ողբալ որ չսպաննեն և գթան  
իւր երիտասարդութեանը վրայ , ևն :  
Կառավարութիւնը կապահովէ քա-  
հանային կեանքը և կը խոստանայ ա-  
զատ թուղուլ , սա պայմանաւ որ Վա-  
սիլ Լէվոքի Տիտքօն անուն անձը  
յանձնէ կառավարութեան : Յուգան  
կընդունի այս առաջարկը և իւր ա-  
հաւոր երդումն ոտնակոխ ընելով կը  
խոստանայ Տաճկաց ձեռքը մատնել  
անմեղ հայրենասուէրը : Անմիջապէս  
կարձակեն զինք բանտէն և կը գառ-  
նայ տուն . կը սկսի մտածել թէ ինչ  
խորամանկութեամբ Լէվոքին ձերբա-  
կալել տայ : Մի քանի օր վերջը ե-  
զելութիւնը կիմանայ Լէվոքի որ Գր-  
զանլըք քաղաքը կը գտնուէր . կը  
գուշակէ որ իւր կեանքը վտանդի  
մէջ է . առանց գործելէ դադրելու  
և առանց խոյս տալու , հանգար-  
տութեամբ հետեւեալ նամակին կը

զրէ որ բառ առ բառ կը թարգմանեմ ասոտ պուլղարական պատմութենէն :

«Հայր Քրիսթօ ,

«Յաւօք սրբի խմացայ Զեր Արժանապատութեան ձերբակալուիլը . խմացայ նաեւ Վճռաբեկ ատենին ձեզ մահուան դատապարտելը և յետոյ բանտէն անձակելով աղատ թողուլը . եթէ չեմ խաբուած , կարծեմթէ ձեր աղատութիւնը իմ մահուամբո գնեցիք և իմ արիւնովս պիտի կարենաք ձեր կեանքը աղատել . բայց զգուշացիք , Հայր , և միշտ զգուշացիք քու յուգայտկան գիտաւորութենէդ . գնա՞ շնւու ինքինքդ յանձնէ այն վայրենեաց և թող յօշութեն մարմինդ . երկշոտ մի լինիք . թող մահը երկնչիքնէ , ոչ թէ դու մահէն . իոկ եթէ մատնես զիս , այն ատեն ես պիտի մեռնիմ , բայց մահուանէս վերջը

անշուշտ պիտի գոնուին մեր անձնուրաց ընկերներէ մի քանի հոգիներ որոնք քու կեանքդ ալ պիտի վերջացնեն . մատարերէ անդամ մը մեր կանոնագրութեան 28րդ յօդուածն որ մատնիչներու կը վերաբերի . այժմ մեծ աղէտից պատճառ կը լինիս դու քանզի ամեն բան կարգին է և Պալքանի բոլոր գիւղերը պատրաստ են ապատամբելու . արդ ժամանակ է մեր տառապեալ հայրենեաց օդնելու : Դարձեալ կըսեմ զգուշացիք . զիտցիքը որ բոլոր Աղդը մատնած պիտի լինիս այս կերպով : Նամակիս պատասխանը իմ յատուկ թղթատարիս յանձնէ :

Մնամ Աղդիս ազատութեան  
անձնունուէր

ՎԱՍԻԼ ԻՎԱՆ ԼԵՎՈՒՏԻ

1872 գեկտ. 28

ԳՐԱԿԱՆԱՐԺ

ԼԵՎՈՒՏԻ ՎԵՐՈՊՐԵՄ ՆԱՄԱԿԸ ԱՐԱԳԱԲԱՐ կը հասնի ի ԼՕՓՀԱ , Բօր

Քրիսթօխ ձեռքը , գաղտնի թղթաւտարին միջոցաւ : Քահանայն նամակը կը կարդայ և կը հիմնայ թէ տեղի ունենալիք մատնութիւնը ինչ շուտ գուշակած է Լէվո.քի : Վերջապէս իւր այառաժ սիրտը առանց կակլանաւլու կըսէ ինքնիրեն . Պէտք է որ վասսիլ մեռնի . այս է իմ վերջին որոշումս . ահաւասիկ պատեհ առիթ մը զինք Տաճկաց ձերբակալել տալու : Եւ իւր կեցած սենեկին մէջ մի քանի վայրկեան շրջագայելէ յետոյ , կը նստի հետեւեալ նամակը կը գրէ Լէվո.քին .

« Որդեակ իմ վասիլ ,

« Գըզանլըք քաղաքէն գլուած գեկտ . 28 ամսաթիւ մի զարմանալի նամակդ ստացայ , գաղտնի թղթատար իլիս Շօրօֆի ձեռօք . յետոյ կարդացի մեծ զարմանօք : Բայց , որդեակ իմ , շատ սխալած էք , ձեր

այդ գուշակութիւնը անհիմն է . դուշաբունակէ սրբազնն պաշտօնդ . այստեղ ալ գործերնիս կարգին է և շատ մը գաղտնիքներ ունիմ քեզի հաղորդելու . ուստի անհամբեր կոպասեմ քեզ յունվ . նին գեշերը մեր հէթքօի թիւ Յ պահպոկը . ես ալ անպատճառ պիտի գամ հօն և կարեւոր գործերու վրայ մասնաւոր տեշզեկութիւններ պիտի տամ քեզ :

Մնամ ազօթարար և անձնուեր  
Պուլղար Աղգիս

ԲՕԲ ՔԲԻՍԹՈ ՎԱՐՊԱՆՈՅ

2 յունվ. 1873

Լօֆչա

Ազնիւ ընթերցող , անշուշտ կարեւորութիւն տալով չպիտի հաւատաս վերոյիշեալ մատնիչ քահանային գրոյն որ իւր գրած նամակը թղթատար Շօրօֆի յանձնելէ յետոյ , Լէվո.քիէ ընդունած նամակը անմիջապէս

Լօֆչա քաղաքի գոյմագամին կը տա-  
նի ուրախութեամբ և կըսէ . Եֆեն-  
տիմ , իշխմիզ եօլունտա տըր . մի քա-  
նի օր վերջը . այսինքն յունվ Դին գի-  
շերը , Լէվոքին անպատճառ ձեղի  
պիսի յանձնեմ . եթէ ինձ չէք հա-  
ւատար , ահաւասիկ նորա ձեռագիր  
նամակը և իւր բուն ստորտըսութիւ-  
նը որ Գլղանլը քաղաքէն գեկտ .  
28 թուականաւ առ իս ուղղած է .  
Ճիշդ որոշեալ գիշերը պիսի գանէք  
զնա Շիբքաի ստորոտը Բէթքօ անուն  
Պուլղարին պանդոկը . Այսպէս իւր  
գժոխալին գիտաւորութիւնը կատա-  
րելէ յետոյ , Թօք Քրիսթօն կը դառ-  
նայ տուն , մի քանի ժամ կը մտածէ  
իւր գործած վատութեանը վրայ և  
վերջապէս կը զզայ . բայց ի զուր ,  
քանդի ամեն բան լմնցած էր :

1873 յունվ Դին կէս օրէն երկու  
ժամ առաջ երեսուն հոդի զինեալ  
ձիւոր կառավարական պաշտօնեալք

Պուլղարի զգեստով Լօֆչա քաղաքէն  
ճամբար ելան որոնց մին հաղարապետ  
և ուրիշ մալ հարիւրապետ էր , իսկ  
մնացեալ 28ն զապթիէ էին : Վեց  
ժամ շարունակ ճամբորդելէ յետոյ ,  
արեւը մարը մտնելէ կէս ժամ առաջ  
կը հասնին Բէթքօի պանդոկին ծօտա-  
կայ անտառի մը մէջ ուր կսպասեն .  
յետոյ երկու հրամանատարք կը մրտ-  
նեն Բէթքօի պանդոկը , ճամբորդ  
ձեւացնելով ինքինքնին . կը սկսին  
պուլղարերէն լեղուով խօսակցիւ (սո-  
քա Բօմաք էին , անոր համար լու  
կը խօսէին պուլղարերէն) . Երեկոյ-  
եան կերակուր պատրաստելու հրա-  
ման տուին Բէթքօի : Հաղիւ սկսու  
մթագնիլ հորիզոնը , Լէվոքի տուիծի  
նման իւր նժոյգ ձին հեծած ուղղա-  
կի իջաւ իւր օթեւանն . Բէթքօ քըմ-  
ծիծաղով գիմաւորեց իւր տիրոջ , բա-  
րեւելով և ըսելով՝ Տօպրօ տօշէլ (բա-  
րի եկար) . Լէվոքի ալ պատասխա-

նեց Տօպրօ զավարի (բարի տեսանք)։  
Լէվսքի առաջին անգամ հարցուց  
Բէթքօի թէ Լօֆչայէն Բօր Քրիսթօ  
եկա՞ծ էր . Բէթքօ ալ պատասխա-  
նեց թէ Ո՛չ և իմաց տուաւ թէ Եր-  
կու անձանօթներ միայն կը գտնուին  
6 թիւ սենեկին մէջ : Արդէն Բէթքօ  
անձանօթներուն վտանգաւոր մարդիկ  
լինելը գուշակած էր . անոր համար  
սկսաւ խորհուրդ տալ Լէվսքիի որ  
եթէ առանց վարանելու հեռանայ ,  
լաւ պիտի ընէ : Լէվսքի հաճութիւն  
կուտայ պանդոկապետի խորհրդին և  
կուղէ տեսնել անձանօթաց գէմքը .  
պատուհանի տպակիէն կը դիտէ և կը  
հասկնայ որ զինքը ձերբակալելու  
պաշտօնն ունին . յեաոյ կը մտնէ տ-  
խոռին մէջ , կը բանայ իւր արկղը և  
գաղտնիք պարունակող բոլոր թուղ-  
թերը կալրէ . եթէ այդ թուղթերը  
Տաճկաց ձեռքը անցնէին , հաղարա-  
ւոր Պուլզարներ մահուան պիտի դա-

տապարտուէին իրբեւ ապստամբ . յե-  
տոյ կը հեծնէ ձին , կը սկսի սրարշաւ  
փախչիլ գէպի ահատաւ : Թուրք պաշ-  
տօնեայք կը տեսնեն Լէվսքիի փա-  
խուստը և կը սկսին բէզօլվէրի գըն-  
տակիներն ուղղել նորա ետեւէն . բայց  
Լէվսքի աղաս մնալով դարձեալ կը  
շարունակէ ճամբան . նոյն միջոցին  
անտառին մէջէն զինեալ զարթիէք  
կը յարձակին նորա վրայ և մարմնոյն  
մի քանի տեղերէն կը յաջողին վիրա-  
ւորել :

Լէվսքի նորէն կը շարունակէ ճամ-  
բան և Երբ անտառին մէկ նեղ ճամ-  
բէն կանցնէր , յանկարծ ծառի մը  
ճիւղէն կը կախուի և անկարող կըլ-  
լայ ազատիլ . նոյն ատեն թշնամիք կը  
ձերբակալեն զնա և ուղղակի Սօֆիա  
կուղարկեն . եղելութիւնը կը հեռա-  
գրուի կ . Պոլիս առ Բ . Դուռն և ան-  
կից Մազհար փաշան կը դրկուի Լէվս-  
քին դատելու համար : Հարցաքննու-

թիւնը կը սկսի : դատաւորն կը հարցունէ Լէվոքիի թէ որո՞նք են իւր ընկերները . իսկ Լէվոքի տմենայն քաջութեամբ հետեւեալը կը պատասխանէ Մաղհար փաշային . Եթէ կուզէք հասկնալ թէ իմ ընկերներս ուրո՞նք են , ամբողջ Պուլղար աղգնէ . իմ մահուանէս վերջը հարիւրաւոր Լէվոքիներ երեւան պիտի ենեն և պիտի պատերազմին վայրենի Թրքաց դէմ և վերջապէս պիտի յաջողին թշուառ և հարստահարեալ աղգ մը ազատելու : Լէվոքի կիմանալ այն օը որ հետեւեալ առաւօտուն պիտի կախեն զինք . նոյն գիշերը գլուխը բանտին քարերուն կը զարնէ մեռնելու համար , քանզի այնպէս ուխտած էր որ երեք ողջ չանցնի թշնամեաց ձեռքը , և այսպէս առաւօտեան դէմ կիսամեռ անզգալ վիճակի մէջ կը տարածուի բանտին քարերուն վրայ : Հետեւեալ առաւօտուն իր դիսկը

կախաղան կը բայրծրացունեն Սօֆիա քաղաքի անկիւնը 1873ի փետրվին : Դալով մատնիչ քահանային , Օսմաննեան կառավարութիւնը շնորհեց նորա կեանքը փոխարէն մատնութեանը . յետոյ մի քանի անգամներ անձնութանուրաց Պուլղարներ կը խորհրդակցին զայն սպաննելու համար , բայց կրօնաւոր ըլլալուն պատճառաւու աղատ կը թողուն : Այս անձը մինչեւ 1883 ողջ էր . ուր որ երթար , զինքը կը նախատէին և նորա անունը կը կոչէին բուհտարէլ (մատնիչ) :

Ծնառ 1843 սեպտ. ամսոյ 16ին թրմովա քաղաքին մէջ : Լէվոքիի մահուանէ յետոյ , սորա յանձնուեցաւ այն պաշտօնը որ կը կատարէր Լէվոքի : Անկէլ քիչ ժամանակի մէջ

սիրելի եղաւ լուսաւորեալ և ազա-  
տասէր Պուլզարաց . երեք տարի սա-  
ալ շարունակեց այս պաշտօնը ամե-  
նայն աշխուժութեամբ . տուանց հան-  
դիստ առնելու գիւղէ գիւղ կը չըջէր  
Պուլզարները ապստամբութեան յա-  
րել տալու համար : 1874 յունիս ամ-  
սոյ վերջերը օր մը երբ գաղանի թուղ-  
թերով Ռուսճուքէն ձուրճէվո անց-  
նելու համար նաւահանգիստը կըս-  
պասէր շոգենաւի գալուն , յանկարծ  
զապթիէ մը մօտենալով նորա անցա-  
գիր անցուց . Քնչօֆ ցոյց տուաւ իւր  
անշաւեր անցագիրը . զապթիէն Քըն-  
չօֆը իր հետ անցագրատուն տարաւ .  
հոն փորձեցին սենեկի մը մէջ զի՞նք  
բանտարիկելու , բայց Քնչօֆ շուտ  
հասկցաւ նոց գիտաւողութիւնը և  
յաջողեցաւ անցագրատունէն ինքինք  
գուրս նետել . զապթիէն նորա ետե-  
ւէն կը վազէր բոնելու համար . Քըն-  
չօֆ տեսաւ որ անկարելի է աղատիլ

նախ գրպանէն գաղանի թուղթերը  
բերանը առնելով կերաւ , յետոյ ըէ-  
փոլիքը ինքինք սպաննեց . անշուշտ  
Անկէլ Քնչօֆ ալ երգութնյած էր  
թշնամեաց ձեռքը ողջ անձնատուր  
չըլլալու համար : Հետեւեալ օրը գի-  
ակը յանձնուեցաւ իւր ծերունի հօրը ,  
և թաղուեցաւ գերեզմանատան մէկ  
անկիւնը որ ձրի էր : Թուրք ազգը  
եթէ իւր յիմարութեանը չափ ար-  
թուն ալ լինէր , կրնար Անկէլ Քնչօֆի  
գիակը անգամազնսական գործողու-  
թեան ենթարկելով , այն գաղտնի  
թուղթերը ստամոքսէն գուրս առնել  
և տեղեկանալ , բայց թուրքերը ...

Յին Արեւելեան Բումէլիի Քաղօֆէր  
գիւղաքաղաքին մէջ : Սորա յիշատակն  
աւ կը յարգեն Պուլզարք մինչեւ ցայ-  
սօր :

1876 ապրիլ ամսոյ 20 ին , Արե-  
ւելեան Բումէլիի Քիսուրա և Քօր-  
բիվշիցա գաւառի Պուլզարք ապրո-  
տամբեցան Օսմանեան պետութեան  
դէմ . այս յեզափոխութիւնը գրեթէ  
մէկ ամիս տեւեց . Պօթէֆ աւ կու-  
զէր Դանուբը անցնիլ և մի քանի  
հազար հոգիներով երթաւ Պալքանը  
գրաւել և յետոյ միանաւ Քիսուրա  
և Քօրբիվշատիցաի ասպատակ խում-  
բերուն հետ : Պօթէֆ այն թուակա-  
նին Ռումանիոյ ձուբճէվո (Եէրկէօյ)  
քաղաքը կը գտնուէր և Վրացաի  
խումբերէ նամակի կապաւէր . երկու-  
օր վերջը գաղտնի թվիթատար մը  
ուղղակի իւր տիրոջը (Պօթէֆի) սեն-  
եակը իջաւ և նամակ յանձնեց նորա :  
Պօթէֆ անմիջապէս իւր մտերիմները

կոչելով , գրադանէն հանեց կնքեալ  
նամակը և սկսաւ կարդալ հետեւ-  
եալը .

«Եղբարք իմ Աղոտարարք Պուլ-  
զարիոյ , ի քաղաքի ձուբճէվո (Ռո-  
մանիա ) .

«Նախ և առաջ բարեյաջողութիւն  
կը ինդքեմք Ամենակալն Արարէն որ  
անվաս միանամք անյազթելի զօրու-  
թեամբ :

Զեր բոլոր հրամաններն ամենայն  
փութով կատարեցինք . ամեն ինչ  
պատրաստ է , մի միայն ձեր գալլո-  
տեան կը սպասեմք անհամրեր : Մեր  
երկու բարբարոսք այս օրերս աւելի  
եւս սաստկացուցինք քիւնէից գէմ  
շարագործութիւններն . գրեթէ բո-  
լոր Պալքանեան Պուլզար ժողովուրդք  
արտասուաց և արեան մէջ կը լողան .  
ձեր գալլուսոր պիտի փրկէ մեզ , մեր

գիւղերու քըրիստոնեայք անդադար  
Պօթէֆ կաղազակեն . մի քանի օր  
առաջ Պալքանի շվշակայ Սթրուբից ,  
Թիփչինիցա , Կալաթին և Կլօժէնի  
գիւղերն Զէրքէգք այրելով մսխիր  
գարձուցին . մինչեւ իսկ նորածին  
մանկանց գլուխներու վրայ անդուժ  
Զէրքէղներու գաշցնը չողաց : Ըստ  
հրամանի ձերում , այժմ Վրացաի ան-  
տառին մէջ գէպի հարաւային կողմը  
երեք հարիւրի մօտ դինեալ Պուլզար  
անձնուրացներ պատրաստ պիտի գըտ-  
նէք և գարձեալ արեւելեան կողմը  
Լօֆչա քայաքէ երկու ժամ հետի ,  
Տըրըսնօ գիւղի անտառին մէջ պիտի  
միանաք հազարի չափ Պուլզարաց , ո-  
րոց ամենքն ալ երգուընցած են մին-  
չեւ վերջին շունչ պատերազմիլ Տաճ-  
կաց գէմ , ձեր հրամանատարութեան  
ներքեւ : Առ այժմ մեր կողմերը հա-  
զարի չափ (մէկ թապուր) Օսմանեան  
զօրք կը գտնուի . թնդանօթ չունին

իրենց հետ և այժմ Լօֆչա քաղաքի  
մէջ ալ երկու բանակ (մէկ բանակ 800  
հոգի) զօրք կը գտնուի որոնք մի  
քանի օր առաջ Բլէզստէն գնացին :

Դործակատար

Վ. ՊԱԼՔՈՍՆՔԻ

1 մայիս 1876 , Վրացա

Պօթէֆ վերցիշեալ որոտաշարժ նա-  
մակը կարդալէ յետոյ իւր մոերիմնե-  
րը կը հրաւիրէ նոյն գիշերը խորհր-  
դակցելով վերջին որոշում մը տալու :

Հաղիւ կէս գիշերուան ժամը (Բ.  
Ե.) 9 կը հնչէք , ձուրձէփո քաղաքի  
Ըսթրաւառ Լիրիսքա փողոց թիւ 185  
տան մէջ Յեղափոխական ընկերու-  
թեան անդամք բոլորն ալ ներկայ էին :  
Ատեանը բացուեցաւ նախագահու-  
թեամբ Խրիմթօ Պօթէֆի . խորհր-  
դակցութիւնը տեւեց մինչեւ ձա-  
գու մն արեւու . վերջապէս որոշուե-  
ցաւ մայիս 18ին Ռոմանիաէն անցնիլ

ի Պուլպարիա և արգեն Ռատեցքի աշ-  
նուն աւստրօ-հաւնդարական շոգե-  
նաւը նոյն օրը Ռոմանիոյ բոլոր նա-  
ւա-  
ւահանդիսաները հանդիպելով ճամ-  
բորդ պիտի առնուր : Ռատեցքի լու-  
պիտի նպաստէր Պօթէֆի խումբին ,  
քանզի Դանուբ գետի վրայ երթեւեւ  
կող ամենէն մեծ և ընտիր շոգենաւ-  
ներէն մին էր Ռատեցքի :

Պօթէֆի խումբը 300 հոգիէ կը-  
բաղկանար . նոցա 80 ը միայն պիտի  
թողուր իւր մօտ և մնացեալ 220 ը  
այլ և այլ նաւահանդիսաները պիտի  
բաժնէր որոնք միեւնոյն օրը պիտի  
մոնէին շոգենաւ , այնպէս որ Ռոման  
կառավարութիւնն ու կասկածելով  
բան մը չպիտի գուշակէր . բայց եթէ  
այդ 300 անձինք մէկ նաւահանդստէ  
շոգենաւ մոնէին , այն ատեն թէ կա-  
ռավարութիւնը և թէ Ռատեցքի նա-  
ւապետն պիտի հասկնային գործը ,  
քանզի և ոչ մէկ անդամ այդշափ

բազմութիւն չէր պատահած : Մայիս  
16ին շոգենաւն կալացէ ճամբար ե-  
լած էր արգեն . նոյն գիշերը Պուաի-  
լա ժամանեց . անդ Պօթէֆի արբան-  
եակներէն 36 հոգի իրենց անյագրե-  
րը կարգաւ ցոյց տալով տեղական  
կառավարութեան պաշտօնէից , իրենց  
պատերազմական գործիքներով միա-  
տեղ անվտանգ մոռն շոգենաւ . շո-  
գենաւը հասաւ Քալատաշ , անկէց  
ալ մոտն 24 հոգի . Օլմէնիցաէն 26 ,  
Ճուրձէվոէն 80՝ Պօթէֆի հետ միա-  
տեղ , Զէմիչէն 20 , Թուրնո-Մօկո-  
բէզէն 60 , Քուապիաէն 30 և վեր-  
ջին նաւահանդստէն Բիգէթէ 24 .  
ընդամենը 300 հոգի ամբողջապէս :  
Սոքա ուրախ և զուարթ էին , բայց  
երբէք ուեւէ խօսակցութիւն չէին ը-  
ներ որ մի գուցէ նաւապետն կաս-  
կածելով շոգենաւին Պուլզարիոյ նա-  
ւահանդիսաներն հանդիպած միջոցին  
Տաճկաց ձեռքը մատնէր զիրենք :

Երբ Բիգէթէ բաժնուեցաւ շոգենաւը ,  
կարծես ամենքն ահեղ տուիւծներ  
դարձան . իսկ Ռատեցքի արագաբար  
կը յառաջանար դէպի Ռահօվա . երբ  
նոքա կը տեսնէին հոյրենեաց գեղա-  
զուարճ գաշտերը , տուաւել եւս կը  
զուարճանային առանց մտարերելու  
իրենց մահը : Այս միջոցին Պօթէֆ  
իւր մօտ կը կոչէ իւր օգնականը Պրն.  
Տավիտօֆ , գրօշտկակիր Անասթաս  
Ճումալիէֆ , Վոյնօվսքի և Բօր Սա-  
վո . առանք խորհրդակցելով , Սավա  
քահանայն իբրեւ պատգամաւոր կը  
զրկեն Ռատեցքի շոգենաւի առաջին  
նուապետին որ առանց դիմադրելու  
շոգենաւին դէկը յանձնէ Պօթէֆի հը-  
րամանատարութեան որպէս զի կարո-  
գանան մակոյիներով ելնել հայրենեաց  
հողը : Անձնուրաց քահանայն մօտե-  
նալով նուապետին ամենայն քաղա-  
քավարութեամբ հետեւեալ խօսքերը  
կարտասանէ պուլղաբէրէն լեզուա .

Պըն . Նուապետ , յանուն Պուլղարիս  
ազատութեան կը ներկայանամ Զեր  
Մեծապատուաթեան իբրեւ պատ-  
գամաւոր Պուլղար փոյզօտային որ այս  
վայրկենիս աստ կը գտնուի Խրիսթօ  
Պօթէֆ անուամբ , նորա մի փոքրիկ  
առաջարկութիւնը ձեզ մտառացնելու  
համար : Նուապետն շուարեալ կը  
պատասխանէ Բօր Սավայի թէ՝ Ի՞նչ  
ըսել կուզէք , չեմ կարող հասկնալ  
ձեր միտքը : Քահանայն դարձեալ կը  
յարէ . Քսել կուզեմ թէ ձեր շոգե-  
նաւի մէջ 300 հոգի Պուլղար երիտա-  
սարդներ կը գտնուին որոնց նպա-  
տակն է ձեր շոգենաւի օգնութեամբ  
Պուլղարիս ելնելով Տաճկաց դէմ  
պատերազմիլ . մի քանի ժամի համար  
անհրաժեշտ պէտք է որ շոգենաւը  
մեզի յանձնէք , յետոյ դարձեալ ձե-  
զի յանձնելու պայմանով . գուք դարձ-  
եալ պիտի կարողանաք որոշեալ ժա-  
մանակին համնիլ բոլոր նաւահան-

գիտաներն : Առաջին և երկրորդ նաւապետք կը խորհրդակցին և կը պատասխանեն թէ այսպիսի բան մը ո՞ւր լսուած է և թէ իրենց անկարելի է ընդունիլ այս ծանր և վատանդաւոր առաջարկութիւնը . ասի մեծ անպատճեւոթիւն մ'է նաւապետաց համար և Ռատեցիի պատասխանատառւութիւնը իրենց կը վերաբերի : Ասոր վրայ Բօր Սավա բարկութեամբ կը պատասխանէ . Յիրաւի այսպիսի բան մը մինչեւ ցարդ լսուած չէ , բայց այժմ պիտի լսուի և պիտի գործադրուի : Եղելութիւնը կերթայ կիմացունէ Պօթէֆի . Պօթէֆ նշան մը կուտայ իւր զինուորներուն , նոքա ալ մեքենաբար մնաւուիները բանալով զենքերը կը հանեն և իսկոյն ամենքն ալ զինեալ պատրաստ կը կենան կարգաւ . Պօթէֆ ձուրձէվո եղած ատեն գիտէր որ նաւապետը պիտի չընդունի իր առաջարկութիւնը , ուստի ինքը

պատրաստած էր գերմաներէն լեզուաւ հետեւեալ նամակը որ մօաենալով նաւապետին տուաւ զայն .

«Առ Պին. նաւապետ Աւատրօ-Հունդարական Ռատեցին Ռատեցի շոգենեաւին .

«Այսօր , 18 մայիս 1875 , հրամանաւարութեամբ Խրիսթօ Պօթէֆի 300 անձնուրաց Պուլզարք աստ ներկայ կը գտնուին . մեր նպատակն է նախ շոգենեաւը մեր հրամանաւարութեան տակ առնուլ , յետոյ ելնել մեր սիրելի հայրենեաց հողը և թշուառ հարստաց արեալ ազգ մը վայրենի մարդոց ճանկերէն ազատել . այն աղդի համար կըսեմ , որոյ հազարաւոր անդամ ցաւալի ազերսներն բոլոր եւ լուպիոյ առջեւ անլուելի մնացած են , և ահա այն ազգն է որ այսօր արեան մէջ մնացած , օդնութեան կազկընկալէ . եթէ ձեր յօժար կամօքը մեր հրամանին շխնարհիք , պատ-

բաստ եմք բռնութեամբ և անքա-  
զաքավարութեամբ վարուիլ ձեզ հետ :

Հրամանատար ԽՐԻՍԹՈ ՊՈԹԵՖ  
ՕԳՆԱԿԱՆ ՏԱՎԻՏՈՒՑ

18 մայիս 1876

Առաջին նաւապետը նամակը կար-  
գալէ յետոյ, ժայիտովմբ կը խոնարհի  
Պօթէֆի հրամանին . այն ատեն շո-  
գենաւը իրենց հրամանատարութեան  
ներքեւ կառնեն, Պօյնօվսքի մեքե-  
նային գլուխը կանցնի, Խատեցքի լըս-  
կոի յառաջանալ և Ծահօվախ ու Լոմ  
Բալանքախ մէջտեղ խարիսխ կը ձգեն .  
անմիջապէս երեք մակոյիներն իջե-  
ցուցին Դանուբի վրայ. Պօթէֆի խուժ-  
ըը հետզհետէ կը լեցուէր մաշոյինե-  
րու մէջ . 5 անգամ երթեւեկելէ յե-  
տոյ ամբողջովին ելաւ Տաճկաց Հողը .  
անդ երկրորդ և վերջին անգամ ա-  
հաւոր երգումնին կընեն հայրենեաց  
հողին վրայ մեռնելու : և եթէ միայն

մէկ հագի մնայ , գարձեալ առանց  
փախաւստ տալու պիտի պատերազմի  
թշնամեաց դէմ : Երդման արարողու-  
թիւնը կը վերջանայ և միութեամբ  
ճամբայ կենեն դէպի Վրացախ ան-  
տառը պատերազմական գիրքեր բըռ-  
նելու համար . իսկ Ուատէցքի արտգա-  
րար կը համնի Լոմ Բալանքա , եղե-  
լութիւնը կիմացունէ Թուրք կառա-  
վարութեան . իսկոյն մի քանի վաշտ  
զօրք և խուժը մը Զէրքէվներ կը  
զրկուին Պօթէֆի դէմ . Լոմ Բալան-  
քաի կուռակալը ամեն կողմ կը հե-  
ռադրէ որ արթուն կենան և օգնու-  
թեան համնին : Պօթէֆ մինչեւ Վրա-  
ցախ Պալքանը կարողացաւ անվնաս  
յառաջանալու . անդ գիմաւորեցին  
Օսմանեան զօրաց բանակներն և սկը-  
սաւ պատերազմը . երեք օր շարու-  
նակ արիւնհեղութիւն տեղի ունեցաւ,  
թշնամիք հաղարներով էին , իսկ Պօ-  
թէֆի միայն 700 Պուլզար միացան :

Զորբորդ օրը Օսմանեան զօրքը պաշարման մէջ թողուց Պօթէֆի բանակը . սովա առանց անձնատուր ըլլալու անգագար կը պատերազմէին . վերջապէս թրքաց ստոտիկ յարձական տաեն բոլորն ալ նահատակուեցան վասն հայրենեաց , միայն երկու հոգի ձերբակալուելով վիրուրեալ վիճակի մէջ Տիգրանակերտ աքսոր զրկուեցան , որոնք միայն սղջ մնալով 1879ին վերագարձան իրենց հայրենիքը ի Պուլզարիա : Ահա այսպէս վերջացաւ Պուլզարաց ապստամբութիւնը Օսմանեան պետութեան դէմ . վերջապէս աղատութեան արշալոյսը ծագեցաւ 1877-78 թուականին , Ուուսիոյ Յէքսանդր Բ կայսեր շնորհիւ :

---

## ՊՈՒԼԴԱՐԻՈՅ

Ա. ԶԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՈՒԽՍՅՅ ԿՈՐԻՒՍԵԱԼ ԶՈՐԱՅ ԹԻՒԲ

Վոյեննօ Վետօնօսք զինուորական Մարդահամարէն թարգմանելով աստ կը յիշեմք Ուուսաց կորուսեալ զօրաց թիւը :

Ա. ԶԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ

1. Առաջին անգամ Դանութ գետէն Զիթօվ քաղաքը անցած ժամանակ , 1877 յունիս 15ին , մեռեալ 358 հոգի և վիրաւորեալ 466 :

2. Նիքօրօլ բերդաքաղաքը գրաւելու համար , 3 յուլիս 1877ին , մեռեալ 664 , իսկ վիրաւորեալ 1442 :

3. Գուրտ քօլիալա գրաւած առեն , 1877 յուլիս 5ին , մեռեալ 60 և վիրաւորեալ 165 :

4. Բէքվասի առաջին յարձակման ժա-

մանակ, 1877 յուլիս 8ին, մեռեալ 1050, վիրաւորեալ 1747:

5. Դարձեալ Բ անդամ Բլէֆսահի յարձակման ժամանակ, 1877 յուլիս 18ին, մեռեալ 1845 և վիրաւորեալ 3322:

6. Շիրքափի ճամբաները բոնելու համար, 9-13 օգոստ. 1877ին, մեռեալ 979, իսկ վիրաւորեալ 2514:

7. Ի Բլէֆսա Օսման փաշաին Ո-ուսաց վրայ յարձակման ժամանակ, 19 օգոստոսին, մեռեալ 194 և վիրաւորեալ 786:

8. Լօֆչա քաղաքի գրաւման ժամանակ, 22 օգոստ. 1877ին, մեռեալ 750, իսկ վիրաւորեալ 1116:

9. Գ անդամ Ո-ուսաց Բլէֆսահի վրայ յարձակման ժամանակ, օգոստ. 26-30ին, մեռեալ 4100, վիրաւորեալ 9745:

10. Բ անդամ Շիրքափի ճամբաները գրաւելու համար, 5 սեպտ. 1877ին, մեռեալ 298, վիրաւորեալ 915:

11. Ո-ուսաց Կոռնիի Տըպնիք գիւղի վրայ յարձակման ժամանակ, 12 հոկտ.ին, մեռեալ 1400, վիրաւորեալ 3016:

12. Ելէնա քաղաքի գրաւման ժամանակ, 22-24 նոյ., մեռեալ 620, վիրաւորեալ 988:

13. Զորբորդ անդամ Բլէֆսահի վրայ Ո-ուսաց յարձակման ժամանակ երբ յաջողեցան Օսման փաշա գերի բոնել 40 հազար Օսմանեան զօրօք, 28 նոյ. 1877ին, մեռեալ 640, վիրաւորեալ 1186:

14. Արապա-Գօնաքի գրաւման ժամանակ, գեկտ. 19ին, մեռեալ 239, վիրաւորեալ 804:

15. Նրբորդ և վերջին անդամ Շիրքա Պալքանը գրաւելու ժամանակ, 28 գեկտեմբերին, մեռեալ 2100, վիրաւորեալ 3857:

16. Ֆելիպէի գրաւման ժամանակ, 1878 յունլ. 3-5ին, մեռեալ 450, իսկ վիրաւորեալ 854:

Վերոյիշեալ աջակողմեան 16 պատերազմներու մէջ մեռնող Ո-ուս զօրաց թիւն է ընդ ամենը 15,744. Իսկ վիրաւորեալց թիւն 32,253:

### ԶՈՒՄԿՈՂՄԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Զախակողմեան պատերազմներն տեղի ունեցած են հետեւեալ տեղերը. Դանուրէն Կալաց անցնելու ատեն, գրաւումն Եէսիրհի, Այազլար, Քարասան Քէօյիւ,

Գատը քէօյիւ , Ապլանօվա , Սինան քէօյիւ , Զայըր քէօյիւ , Իվան Զիֆթլիք , Բիրկէօզ , Մէջքա , Թրսթէնիք , Քասապինո և Բազարճըք :

Սոյն 14 պատերազմաց մէջ Ռուսաց ունեցած կոտորածն հետեւեալն է .

Մեռելոց թիւն է ընդ ամենը 1294 , իսկ վիրաւորելոցը 5362 :

Պուլզարիոյ մէջ այլ և այլ տեղեր պատահած պատերազմաց մէջ մեռեալ 2606 , վիրաւորեալ 2438 :

Պուլզարիոյ մէջ Ռուսիոյ ունեցած զօրաց թիւն էր 300,000 որոնց 19,644 հոգին պատերազմի դաշտը մեռած են , 40 հազար 753 հոգին վիրաւորուած , 5763 հոգի ալ կորսուած են . այս վերջիններ կամ գերի ինկած են Տաճկաց և կամ փախուստ տուած են օտար երկրաց մէջ :

Ռուս կառավարութեան ըրած ծախքը Պուլզարիոյ համար 100 միլիոն բուպի եղած է :



4n.

ՀՀ Ազգային գրադարան



NL0685891

